Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՑ ՄԵԾԱԳՈՒՅՆԸ

Նա ցույց տվեց աշխարհին,
որ կարելի է դառնալ
արքայից արքա
ու մնալ բարեպաշտ...

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՏԻՐԱԿԱԼԻ ԾՆՆԴՅԱՆ 2150 ԱՄՅԱԿԻՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՑ ՄԵԾԱԳՈՒՅՆԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 941 (479. 25)
ԳՄԴ 63. 3
Մ 917

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

Մ 917 «Տիգրան Մեծ. Թագավորներից մեծագույնը» / Արտակ Մովսիսյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2010, 84 էջ:

Գրքում փորձ է արված հանրամատչելի շարադրանքով և հարուստ պատկերազարդումներով ներկայացնել ականավոր տիրակալ Տիգրան Մեծի կյանքն ու գործունեությունը: Աշխատանքը շարադրված է ըստ սկզբնաղբյուրների հաղորդումների և դրանց հիմամբ կատարված անաչառ հետազոտությունների:

Նախատեսված է Հայաստանի և Հին Աշխարհի պատմությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 941 (479. 25)
ԳՄԴ 63. 3

ISBN 978 - 5 - 8084 - 1307 - 8

Մովսիսյան Ա.Ե., 2010 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Մեծն իր արժանավայել տեղը պետք է զբաղեցնի Արևելքում երբևէ իշխած տիրակալների շարքում:
Նա արժանացել է «Մեծ» տիտղոսին պատվավոր մի կոչման, որը պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին...
Տիգրանն իրեն դրսևորեց որպես աշխարհակալ և լուսավորիչ...

Նիկողայոս Ադոնց

Յուրաքանչյուր ժողովուրդ իր պատմության ընթացքում ծնում է մեծերի, որոնք էլ դառնում են նրա խորհրդանիշ-կերպարները՝ հետագա սերունդներին ուղեկցելով և հզորություն հաղորդելով դժվարին իրադրություններում:

Այս միտքն առավել քան տեղին է հնչում Տիգրան II Մեծի (Ք.ա. 95-55 թթ.) պարագայում, որը ոչ միայն դարձավ մեր պատմության խոշորագույն դեմքերից մեկը, այլև հետագա սերունդների հիշողության մեջ մարմնավորեց մեծ հաղթանակների և աշխարհակալության գաղափարն ու ոգին:

2005 թվականին լրացավ Հայոց մեծ տիրակալի գահակալության 2100 ամյակը, իսկ այս տարի լրանում է նրա ծննդյան 2150-րդ տարեդարձը: Ցավով պետք է նշել, որ այս տարեդարձներն առիթ չդարձան, որ քսանմեկերորդ դարասկզբին ապրողներս մեկ անգամ ևս վերարժեվորենք մեր անցյալն ու ներկան՝ Տիգրանյան ոգով:

Տիգրան Մեծի անունը հայ իրականության մեջ ավելի շատ ներկայանում է «ծովից ծով Հայաստանի» մտապատկեր-կաղապարի տեսքով, որը մնում է չիմաստավորված. մե-

զանում շատերն անգամ պատկերացում չունեն, թե ո՞ր ծովից ո՞ր ծովն է ձգվել Տիգրանյան Հայաստանը...

Տիգրան II Մեծի կերպարն իր ամբողջության մեջ մնում է չճանաչված, իսկ նրա մեծությունը՝ չգիտակցված: Թե ինչո՞ւ է այդպես, կարելի է մատնանշել բազմաթիվ պատճառներ: Դրանցից մեկն, անշուշտ, Տիգրան Մեծի մասին գիտահանրամատչելի գրականության գրեթե բացակայությունն է:

Այդ բացը լրացնելու նպատակով էլ որոշեցինք բաց չթողնել Հայոց տիրակալի հոբելյանների պատեհությունը և մեր ժողովրդին ներկայացնել նրա մասին պատմող հանրամատչելի ու պատկերազարդ մի գիրք, որը շարադրված կլինի պարզ լեզվով՝ հիմնված գիտական անաչառ ուսումնասիրությունների վրա:

Թե որքանով է դա հաջողվել, թո՛ղ դատի ընթերցողը:

Հուսով ենք, որ մեծ տիրակալի կերպարի իրական բացահայտումը կօգնի մեզ նաև հաղթահարելու թերարժեքության այն բարդույթները, որոնք մեր ժողովրդի հոգեբանության մեջ մտել են իբրև հետևանք օտար լծի տակ անցկացված դարերի: Հայոց պատմության փառահեղ էջերի լուսաբանումը մեզ կօգնի վերջնականապես հաղթահարելու նման բարդույթները և ապագային նայելու մեծ քաղաքակրթություն կերտած, փառքի ու վեհության բազում դարեր ապրած նախնիների ժառանգի աչքերով:

Հայաստանի աշխարհակալության գաղափարը հաստատուն կերպով զարգացավ Տիգրանի ժամանակ:
Հաջորդ դարերում այս գաղափարը տիրող մնաց հայերի մոտ, թեև քաղաքական հարաբերությունները միշտ նույն գաղափարին չէին համընկնում:

Հայնրիխ Հյուբշման

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԻԳՐԱՆ II ՄԵԾԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

Հայոց պատմության ընթացքում գոյություն են ունեցել մի քանի աշխարհակալություններ: Դեռևս Ք.ա. XXVIII-XXVI դարերում Հայկական լեռնաշխարհի մշակույթը տարածվում է շատ մեծ հեռավորությամբ, ինչը հնարավոր չէր առանց հզոր պետականության: Հարավ-արևմուտքում այն հասնում է Սիրիա և Պաղեստին, հարավ-արևելքում՝ Իրանի կենտրոն, իսկ հյուսիսում՝ մինչև Հյուսիսային Կովկաս:

Այս ժամանակաշրջանից մեզ հասած գաղափարագիր-նշանները դեռևս չեն վերծանվել: Հնագիտական պեղումների շնորհիվ հստակորեն երևում են հայաստանյան մշակույթի ծավալումն ու սահմանները, որոնք ընդգրկում են շուրջ մեկ միլիոն քառակուսի կիլոմետր տարածք: Անանուն արքաների այս աշխարհակալությունն առաջինն է հայոց պատմության մեջ: Սա աշխարհի առաջին մշակութային աշխարհակալությունն է...



Քարտեզ 1. Հայաստանի վաղ բրոնզի դարաշրջանի «մշակութային աշխարհակալությունը»

Քարտեզ 2. Հայկական լեռնաշխարհի 17 «երկրների» տիրույթները (Կուտիական համադաշնության տերությունը)

Այնուհետև Ք.ա. XXIII-XXII դարերում Հայկական լեռնաշխարհի 17 երկրների համադաշնությունը Կուտիական (Կորդվաց) աշխարհի գլխավորությամբ իշխում է Առաջավոր Ասիայի մեծ մասի վրա, ինչը տևում է շուրջ 100 տարի:

Ք.ա. IX դարի վերջին քառորդում Իշպուինի արքայի անցկացրած ռազմական, կրոնական և այլ բարեփոխումների շնորհիվ անշեղորեն սկսեց հզորանալ Վանի թագավորությունը (Նաիրի-Բիայնիլի-Արարատ-Ուրարտու): Նրա որդի Մենուա արքայի օրոք (Ք.ա. մոտ 810-786 թթ.) այն վերածվեց աշխարհակալության՝ հաղթանակներ տոնելով տարածաշրջանի գերտերության՝ Ասորեստանի նկատմամբ:

Արգիշտի I-ի (Ք.ա. 786-864 թթ.) և Սարդուրի II-ի օրոք՝ մինչև Ք.ա. 740-ական թվականների վերջը Վանի տերությունը գերիշխում էր Առաջավոր Ասիայում:

Հայկական լեռնաշխարհին և շրջակա տարածքներին իշխելուց հետո Արգիշտի I-ը Զագրոսի լեռներով դեպի հարավ հաղթարշավով նվաճեց Բաբելոնիան (Բաբիլու երկիրը)՝ մինչև Պարսից ծոց: Իսկ նրա անվամբ արձանագրված սաղավարտներ են գտնվել Հյուսիսային Կովկասից, Աբխազիայից, Օսեթիայից և Թռեղից (Զավախքի հարևանությամբ):

Ք.ա. VIII դարի կեսերին, զարգացնելով իր փառապանծ նախորդի հաջողությունները, Սարդուրի II-ը տերության սահմանները հասցրեց չորս ծովերի ափերին:

Վանի թագավորությունը տարածաշրջանային գերտերության դերակատարում է ունենում նաև Ք.ա. VII դարում՝ Ռուսա II-ի իշխանության օրոք:



Քարտեզ 3. Վանի տերությունը (Նաիրի-Բիայնիլի-Արարատ-Ուրարտու)

Նկար 1.
Լևոն Մեծագործի կնիքը՝ Կիլիկյան Հայաստանի զինանշանով

Վանի տերությունից հետո մեր պատմության մեջ նշանավորվում է Տիգրանյան աշխարհակալությունը, որին հանգամանորեն կանդրադառնանք առաջիկա էջերում:

Աշխարհակալության գաղափարը չի լքում մեր նախնիներին նաև միջնադարում: Բագրատունյաց հայոց թագավորության սկզբնական ժամանակաշրջանում մեր արքաների իշխանությունը բացի բուն Հայաստանից տարածվում էր Վրաստանի, Աղվանքի, Աբխազիայի վրա՝ հասնելով Հայկական Տավրոսից մինչև Մեծ Կովկասի լեռները:

Ավելի ուշ Կիլիկիայում ստեղծված հայկական պետությունը բազում հաղթանակների հասավ ժամանակի հզոր պետությունների նկատմամբ՝ կատարելով նաև տարածքային նվաճումներ: Լևոն II (իբրև արքա՝ Լևոն I) Մեծագործը հռչակվեց «թագավոր ամենայն Հայոց և նահանգին Կիլիկեացոց և Իսավրիո», ինչում արտացոլված էր համահայկական պետությունը վերականգնելու և տերության վերածելու ծրագիրը:

Այս ամբողջից, սակայն, մեր ժողովրդի հիշողության մեջ հատկապես տպավորված է Տիգրան Մեծի տերությունը:

Ինչո՞ւ է այդպես:

Հասկանալու համար այս հարցի պատասխանը՝ անդրադարձ կատարենք Տիգրանյան դարաշրջանի իրադարձություններին:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԻԳՐԱՆ II-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Հռոմեական զորքերը Ք.ա. II դարի վերջին և I դարի սկզբին շարունակում էին առաջխաղացումը դեպի արևելք:

Արևելքում Ալեքսանդր Մակեդոնացու տերության գլխավոր ժառանգորդ Սելևկյան պետությունը կորցրել էր իր երբեմնի հզորությունը: Նախկին հզորությունը կորցրել էր նաև Մակեդոնացու տերության մյուս ժառանգորդը՝ Եգիպտոսի Պտղոմյան թագավորությունը:

Նկար 2.
Հռոմի խորհրդանիշ մայր գայլը՝ քաղաքի հիմնադիր երկվորյակներին կերակրելիս

Փոխարենն Առաջավոր Ասիայում հզորացել էին Պոնտական և Պարթևական թագավորությունները: Պոնտոսում իշխում էր Միհրդատ VI Եվպատորը, որը Սև ծովի ավազանում ստեղծել էր մեծ պետություն:

Պարթևական թագավորությունը, որտեղ իշխում էր Միհրդատ II Մեծը, արևելքում տարածվում էր մինչև Հնդկաստան, իսկ արևմտյան սահման էր դարձրել Եփրատ գետը:

Առաջավոր Ասիայում շարունակում էր հզոր մնալ Մեծ Հայքը, որտեղ իշխում էին Արտաշես I-ի ժառանգները:

ԱՐՔԱՅԱԶՆ ՏԻԳՐԱՆԸ

Տիգրան Մեծը ծնվել է Ք.ա. մոտ 140 թվականին, հավանաբար, մայրաքաղաք Արտաշատում: Նրա մանկության և պատանեկության մասին մենք ոչինչ չգիտենք, թեպետ միանշանակորեն կարելի է ասել, որ նա դաստիարակվել է ժամանակի լավագույն ուսուցիչների կողմից:

Ք.ա. մոտ 120-115 թթ. Պարթևաստանի և Մեծ Հայքի միջև մղված պատերազմն անհաջող է ավարտվում Մեծ Հայքի համար, որը, սակայն, շարունակում էր հզոր մնալ: Պարթևները զգուշանալով, որ հայերը շուտով վրիժառու պատերազմ կսկսեն, պատանդ են պահանջում: Եվ 20-25-ամյա արքայազն Տիգրանը պատանդ է տարվում Պարթևստան:

Նկար 3. Մի հատված մայրաքաղաք Արտաշատից

Այդ ժամանակաշրջանի հայ-պարթևական հարաբերությունների մասին ունենք հույն մատենագիր Ստրաբոնի վկայությունը.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Պարթևները տիրեցին մարերի ու բաբելացիների երկրներին, բայց ոչ Հայաստանին: Թեև հաճախակի հարձակումներ եղան, բայց երկիրը չնվաճվեց:

ՍՏՐԱԲՈՆ,
հույն մատենագիր(Ք.ա. I - I դարեր)

Պարթևական պատանդության մեջ հայոց արքայազնն ուներ հատուկ կարգավիճակ, որն ուսումնասիրողները հաճախ կոչում են «պատվո պատանդություն»: Դրա մասին է վկայում հենց այն փաստը, որ նրա դուստր Արիազատա-Աստոման ամուսնացել էր Միհրդատ II Մեծի հետ և դարձել Պարթևստանի թագուհի:

Նկար 4. Պարթև արքա Միհրդատ II Մեծի դրամներից

Հարևան երկրի արքայազնին պատվո պատանդության կարգավիճակում պահելն ապահովագրումից բացի ուներ մեկ այլ հիմնական նպատակ՝ դարձնել նրան իրենց պետությանը համակիր գործիչ:

Տիգրանի դեպքում պարթևները չարաչար սխալվեցին...

ՊԱՏԱՆԴ-ԱՐՔԱՅԱԶՆԻ ՎԵՐԱԴԱՐՁՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ք.ա. 95 թ. հայոց արքայի մահվանից հետո Տիգրանը վերադառնում է Հայաստան: Որպես վերադարձի պայման՝ նա պարթևներին կատարում է տարածքային զիջում՝ «Յոթանասուն հովիտներ», որը որոշ գիտնականներ համարում են այդ անվամբ շրջան, իսկ ուրիշները՝ 70 գետահովիտներից բաղկացած տարածք հայ-պարթևական սահմանագոտում:

Տիգրանը վերադարձավ Հայաստան 45 տարեկանում: Նա կյանքի առաջին կեսն անց էր կացրել Հայաստանում՝ լիովին ձևավորվելով որպես հայկական շահերին նվիրված պետական ու քաղաքական գործիչ, իսկ երկրորդ կեսը՝ պարթևական աշխարհակալության արքունիքում: Վերջին հանգամանքը, թերևս, նպաստել էր նրա՝ իբրև աշխարհակալի մտածողության զարգացմանը:

Աշխարհակալի մտածողությունը երևում է նրա առաջին իսկ քայլերից: Հայաստան վերադառնալով՝ արքայազն Տիգրանը թագադրվում է մի վայրում, որը ո՛չ երկրի մայրաքաղաքն էր, ո՛չ հոգևոր կենտրոնը, ո՛չ էլ հատուկ թագադրավայր (ինչպես, օրինակ, Տարոնը Կիլիկյան Հայաստանում): Դա այն վայրն էր, որտեղ թագադրությունից շուրջ երկու տասնամյակ անց Տիգրան Մեծը պիտի կառուցեր իր աշխարհակալության նոր մայրաքաղաքը:

Իսկ դա նշանակում է, որ մինչև Հայաստան մտնելը Տիգրանն արդեն իսկ ծրագրել էր ապագա մեծ տերության ստեղծումը, իր մտապատկերում ուներ տերության սահմանների ուրվագիծը, որի կենտրոնական շրջանում էլ հետագայում պիտի կառուցեր մեծ մայրաքաղաքը:

ԾՈՓՔԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՄԵԾ ՀԱՅՔԻՆ ԵՎ ՀԱՅ-ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ

Քաղաքական լուրջ ծրագրեր ունեցող արքայի առաջին խնդիրն անհրաժեշտաբար պետք է լիներ Մեծ Հայքի թագավորության վերամիավորումը: Նրա պապ Արտաշես I-ին չէր հաջողվել վերամիավորել Ծոփքի թագավորությունը Մեծ Հայքին, և այն մնացել էր անկախ: Իր իշխանության սկզբնական շրջանում Տիգրան II-ը պարտության մատնեց այնտեղ իշխող Արտանես Երվանդունուն և Ծոփքը վերամիավորեց Մեծ Հայքին:

Հայկական բոլոր հողերը մեկ միասնական պետության մեջ միավորման գործընթացի տրամաբանական շարունակությունը պետք է լիներ Փոքր Հայքի միավորումը, ինչն այս ժամանակաշրջանում հնարավոր չեղավ:

Նկար 5. Տեսարան Ծոփաց աշխարհից (Արածանիի հովիտը)

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Արտաշեսի շառավիղն էր Տիգրանը, որն ուներ այսպես կոչված բուն Հայաստանը. այն հարակից էր Մեդիային, Աղվաններին և Իբերներին, մինչև Կոլխիս ու Եվքսինյան Կապադովկիա: Իսկ Զարեհի շառավիղն էր Արտանես Ծոփացին, որն ուներ հարավային և, առավելապես, արևմտյան մասերը: Տիգրանը հաղթեց նրան և ինքը դարձավ այդ բոլոր երկրների տերը:

ՍՏՐԱԲՈՆ,
հույն մատենագիր(Ք.ա. I - I դարեր)

Պատճառն այն է, որ Ք.ա. մոտ 112 թ. Փոքր Հայքի արքա Անտիպատրոս Երվանդունին, լինելով անժառանգ, կտակել էր Փոքր Հայքը Պոնտոսի արքա Միհրդատ VI Եվպատորին, որը սկսել էր կրել *«թագավոր Պոնտոսի և Հայոց»* (իմա՝ «թագավոր Պոնտոսի և Փոքր Հայքի») տիտղոսը: Սա հիմք ընդունելով՝ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել է կարծիք, ըստ որի՝ Միհրդատ Եվպատորը ևս կարող էր սերել Հայկազուն-Երվանդականների տոհմից:

Նկար 6
Միհրդատ VI Եվպատորի կիսանդրին

Սև ծովի ավազանում ստեղծելով գերտերություն՝ Միհրդատ Եվպատորը նպատակ ուներ Հռոմին դուրս մղելու Փոքր Ասիայից և Հունաստանից: Այսինքն՝ նրա ծրագրերը կապվում էին արևմուտքի հետ, որտեղ Տիգրան Մեծն առանձնակի քաղաքական հետաքրքրություններ չուներ: Նրա աշխարհակալական ծրագրերը կապվում էին Հայաստանից հարավ-

արևմուտք, հարավ և արևելք ընկած տարածքների հետ, ինչը չէր խանգարում Միհրդատ Եվպատորին: Երկու երկրներին էլ պետք էր ապահովագրել իրենց թիկունքը, մանավանդ, որ իրենց ծրագրերի իրականացման ճանապարհին նրանք բախվելու էին այնպիսի գերտերությունների հետ, ինչպիսիք էին Հռոմն ու Պարթևստանը: Այսպիսի աշխարհաքաղաքական պայմաններում Տիգրան II-ն ու Միհրդատ Պոնտացին Ք.ա. 94 թ. կնքում են դաշինք, որն ամրապնդվում է 46-ամյա Տիգրան II-ի և նրանից մոտ 30 տարով փոքր Միհրդատ Եվպատորի դուստր Կլեոպատրայի ամուսնությամբ:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Կնքված դաշինքի առաջին գործնական դրսևորումը եղավ Ք.ա. 93 թ. հայ-պոնտական զորքերի կողմից Կապադովկիայի նվաճումը: Վերջինիս արքա Արիարաթես Հռոմեասերը փախուստի դիմեց Հռոմ: Նվաճված տարածքը, պայմանավորվածության համաձայն, անցավ Պոնտոսին, իսկ ամբողջ շարժական գույքը Տիգրան II-ն որպես ռազմավար բերեց Հայաստան:

Կապադովկիան Հռոմի քաղաքական ազդեցության տակ գտնվող թագավորություն էր, ուստի հռոմեական բանակները շտապեցին վերականգնել Կապադովկիայում նախկին դրությունը:

Ժամանակին անտիկ պատմագրության մեջ շրջանառվել և նոր ժամանակների պատմագիտության մեջ բազմիցս կրկնվել է այն միտքը, թե, իբր, Միհրդատ Եվպատորը կարողացել է ուղղորդել Տիգրան Մեծին և օգտագործել իր նպատակների համար: Որպես օրինակներ վկայակոչվել են նաև կապադովկիական այս և հետագա արշավանքները:

Սակայն պատմական ավելի լայն կտավի վրա մի փոքր ուշադիր քննելով՝ դժվար չէ հասկանալը, որ Կապադովկիայի դեմ արշավանքները միանշանակորեն բխում էին Մեծ Հայքի

Նկար 7. Տեսարան Կապադովկիայից

շահերից: Խնդիրն այն է, որ դեռևս Արտաշես I-ի (Ք.ա. 190-160 թթ.) իշխանության վերջին շրջանում Ծոփքի՝ Մեծ Հայքին վերամիավորմանը խոչընդոտեց հենց Կապադովկիան: Դա թույլ է տալիս ենթադրելու, որ այդ պետությունը նույնպիսի դիրք պետք է գրաված լիներ Ք.ա. 94 թվին՝ Տիգրան II-ի կողմից Ծոփքի վերամիավորման ժամանակ, մանավանդ որ, իբրև Հռոմի կամակատար, Կապադովկիան ամեն կերպ պետք է խոչընդոտեր Արևելքում նոր պոտենցիալ հակառակորդի՝ Մեծ Հայքի հզորացմանը: Մյուս կողմից Տիգրան II-ը կապադովկիական արշավանքներով լուծում էր ռազմավարական կարևոր խնդիր՝ Պոնտոսի միջոցով փակելով դեպի արևելք ծավալվող Հռոմի ճանապարհը:

ՀՌՈՄ-ՊԱՐԹԵՎՍՏԱՆ ԴԱՇԻՆՔՆ ԸՆԴԴԵՄ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՈՒ ՊՈՆՏՈՍԻ

Ք.ա. 92 թ. Եփրատի ափին կնքվեց հռոմեա-պարթևական դաշինք, որով երկու տերությունների ազդեցությունների

ոլորտի սահմանագիծը պետք է դառնար Եփրատ գետը: Այն ուղղված էր ընդդեմ Մեծ Հայքի ու Պոնտոսի:

Ինչո՞ւ վաղեմի թշնամիները որոշեցին դաշնակցել:

Հռոմի դեպքում դա հասկանալի էր՝ Միհրդատ Եվպատորի նպատակաուղղված հակահռոմեական գործունեությունը և հայ-պոնտական ուժերի կողմից իր ազդեցության գոտում գտնվող Կապադովկիայի գրավումը:

Սակայն ինչը՞ ստիպեց պարթևներին կնքել այդ դաշինքը: Պոնտոսը շատ հեռու է Պարթևստանից և երբեք սպառնալիք չի եղել վերջինիս համար: Նշանակում է՝ պարթևները կնքեցին այդ դաշինքը Հայաստանից պաշտպանվելու նպատակով:

Կարծիք կա, որ Տիգրան II-ը ռազմարշավ էր իրականացրել Պարթևստանի դեմ և հետ ստացել պատանդության դիմաց զիջված հայրենական «Յոթանասուն հովիտներն» իշխանության հենց սկզբնական շրջանում: Դա շատ հավանական է, մանավանդ, եթե նկատի ունենանք Ստրաբոնի ուշագրավ հետևյալ տեղեկությունը.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Տիգրանը փոփոխական բախտ է ունեցել, քանզի նա սկզբում պատանդ է եղել պարթևների մոտ, այնուհետև պարթևները որպես վարձ ստանալով յոթանասուն հովիտներ Հայաստանից, նրան վերադարձնում են գահը: Նա հզորանալով, թե՛ այդ վայրերը ետ վերցրեց և թե՛ նվաճեց նրանց երկիրը՝ Նինվեի և Արբելայի շուրջը: Նա հպատակեցրեց նաև Ատրպատականը և Կորդուքը և սրանց հետ նաև մնացյալ Միջագետքը: Բացի այդ, անցնելով Եփրատը, նա ուժով նվաճեց Ասորիքը և Փյունիկեն:

ՍՏՐԱԲՈՆ,
հույն մատենագիր(Ք.ա. I - I դարեր)

Միջագետքի գրավումը երկու փուլով (նախ՝ Նինվեի և Արբելայի շրջանը, ապա՝ «մնացյալ Միջագետքը») մղում է մտածելու, որ խոսքը երկու պատերազմների մասին է: Առաջինի արդյունքը «Յոթանասուն հովիտների» վերամիավորումն ու Ադիաբենե երկրի (Նինվեի և Արբելայի շրջանի) գրավումն էր, իսկ երկրորդինը՝ ողջ Միջագետքի գրավումով Տիգրանյան տերության հարավային սահմանը Պարսից ծոց հասցնելը: Վերջինս, բնականաբար, պետք է լինի Ք.ա. 87 թ. մեկնարկած պարթևական մեծ արշավանքը, ուստի կարելի է եզրակացնել, որ առաջինը տեղի է ունեցել ավելի վաղ՝ Ք.ա. 94-92 թթ. ընթացքում: Հենց դա էլ պետք է դրդեր պարթևներին Հռոմի հետ դաշինք կնքելու:

Կա կարևոր մի փաստ ևս:

Գիտական գրականության մեջ բազմիցս տարակուսանք է հայտնվել Տիգրան Մեծի կողմից Սելևկյան պետությանը (որի միջուկը Ասորիքն էր) տիրելու մասին տվյալների հակասության առնչությամբ: Մի կողմից նշվում է, որ Ք.ա. 83 թ. նա հրավիրվել է Անտիոք և գահին բազմել առանց մեկ զինվոր կորցնելու (տե՛ս ստորև), մյուս կողմից նշվում է, որ նրան ցույց է տրվել ռազմական լուրջ դիմադրություն:

Խնդիրը փորձել են բացատրել՝ ենթադրելով, որ Ասորիքում գոյություն են ունեցել ռազմաքաղաքական երկու հակադիր կուսակցություններ: Սակայն նման բացատրությունը ճիշտ կլիներ, եթե հայոց արքային հրավիրելն ու նրան դիմադրելը տեղի ունեցած լինեին միաժամանակ: Մինչդեռ ըստ Ապպիանոսի՝ Տիգրան II-ի դեմ պատերազմել և նրանից պարտություն է կրել Անտիոքոս X Եվսեբեսը, որն իշխել է Ք.ա. 95-92 թվականներին: Սա նշանակում է, որ հայոց արքայի սելևկյան առաջին արշավանքը պետք է տեղի ունեցած լինի մինչև Ք.ա. 92 թվականը (ներառյալ): Ամենայն հավանականությամբ, այստեղ գործել է դաշնակիցների համաձայնեցված գործողությունների ծրագիրը. կապադովկիական առաջին արշավանքից հետո Միհրդատ Եվպատորը գրավեց Բյութանիան, իսկ Տիգրան II-ն արշավել է Սելևկիայի դեմ:

Դա էլ, թերևս, արագացրել է հռոմեա-պարթևական դաշինքի կնքումը:

Թե ինչո՞ւ Ասորիքում Ք.ա. 92 թ. չի հաստատվել Տիգրան II-ի իշխանությունը, կարելի է միայն ենթադրություններ անել: Փաստ է, սակայն, որ հայոց արքան այդ թվականին հաղթել և գահընկեց է արել Անտիոքոս X Եվսեբեսին, որի ազգականները հետագայում կհայտնվեն Տիգրան Մեծի դեմ ձևավորված հռոմեական ճամբարում:

Փաստորեն, Ք.ա. 95-92 թվականները Տիգրան II-ի համար եղել են կարևոր իրադարձություններով խիստ հագեցած տարիներ: Ծոփքի վերամիավորումից և հայ-պոնտական դաշինքի կնքումից հետո Մեծ Հայքի արքան Միհրդատ Պոնտացու հետ համատեղ իրականացրել է կապադովկիական առաջին արշավանքը, իսկ միայն իր ուժերով՝ ***պարթևական և սելևկյան առաջին արշավանքները:***

Հավանաբար, հենց այդ ժամանակ էլ (եթե ոչ ավելի վաղ) Վիրքն ու Աղվանքն ընդունել էին հայոց արքայի գերիշխանությունը:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Ք.ա. 91 թ. հայկական զորքերը երկրորդ անգամ են արշավում Կապադովկիա և ռազմակալում այն: Հետաքրքիր է, որ երկու արշավանքների ժամանակ էլ, ըստ պայմանավորվածության, Կապադովկիայի տարածքն անցնում էր Պոնտոսին, իսկ ողջ շարժական գույքը (հսկայական ռազմավար և շուրջ 300 հազար գերիներ) անցնում էր Մեծ Հայքի թագավորությանը:

Առաջին հայացքից անհասկանալի է թվում Տիգրան Մեծի նման մոտեցումը. մի՞թե նրան պետք չէր Կապադովկիայի նման կարևոր ստրատեգիական դիրք ունեցող հարուստ երկիրը: Հետագա իրադարձությունները, սակայն, թույլ են տալիս

մեզ հասկանալու, որ այստեղ ևս հայոց տիրակալը հեռահար մեծ հաշվարկ ուներ:

Կապադովկիան իր իշխանության տակ վերցնելը կբերեր Հռոմի հետ հակամարտության, որն ամենևին պետք չէր այդ ժամանակ Տիգրան Մեծին: Հայկական շահերին լիովին համապատասխանում էր, որ Կապադովկիան անցներ իր դաշնակից Պոնտոսի իշխանության տակ՝ դրանով ապահովելով Մեծ Հայքի թիկունքն արևմուտքից: Փոխարենը Տիգրան Մեծը նախապատրաստվում էր Պարթևստանի դեմ մեծ պատերազմի, որից առաջ պետք էր պետությունն ապահովել տնտեսական և մարդկային ռեսուրսներով: Այդ իսկ պատճառով կապադովկիական արշավանքներից նա Հայաստան բերեց հսկայական հարստություն և մեծ թվով բնակչություն, որի զգալի մասը հետագայում բնակեցվեց նորահաստատ Տիգրանակերտ մայրաքաղաքում:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

(Տիգրանը) Կապադովկիան պաշարելով, մոտ 30 բյուր մարդ տեղահանեց ու տեղափոխեց Հայաստան և նրանց, այլոց հետ միասին, համաբնակեցրեց մի վայրում, որտեղ նա առաջին անգամ հագավ Հայաստանի թագը և այդ վայրն իր անունով կոչեց Տիգրանակերտ կամ Տիգրանապոլիս:

ԱՊՊԻԱՆՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻ,
հույն պատմիչ (II դար)

Փաստորեն, Տիգրան Մեծը կառավարման առաջին փուլում (Ք.ա. 95-91 թթ.) ոչ միայն վերականգնեց Մեծ Հայքի տարածքային ամբողջականությունը, այլև տնտեսական և մարդկային ռեսուրսներով ապահովեց իր ապագա արշավանքները: Նրա կնքած հայ-պոնտական դաշնագրով ապահովագրվեց Մեծ Հայքի թիկունքն արևմուտքից և հյուսիսից:

ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՄԵԾ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԵԿՆԱՐԿԸ. ԳԻՍԱՍՏՂԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ք.ա. 87 թ. մահացավ Պարթևստանի արքա Միհրդատ II Մեծը, որին ժամանակին Տիգրան II-ը կնության էր տվել իր դուստր Արիազատա-Աուտոմային, ինչի համար էլ նա ձեռնպահ էր մնում Պարթևստանի դեմ լուրջ գործողությունների դիմելուց: Միհրդատ II-ի կյանքի վերջին տարիներին սկսված ներքաղաքական պայքարի հետևանքով Պարթևստանը զգալիորեն թուլացել էր: Գահի հիմնական հավակնորդը «սատրապների սատրապ» Գոդարզն էր, որը դեռևս Ք.ա. 91 թ. իրեն թագավոր էր հռչակել Բաբելոնում և փորձել գրավել պարթևական գահը: Պահը հասունացել էր, և հենց Ք.ա. 87 թ. Տիգրան Մեծն անհապաղ հարձակվեց Պարթևստանի վրա:

Նկար 8. Տիգրան II Մեծի դրամներից. առաջինի վրա թագին պատկերված են ավանդական ուքաթև աստղն ու երկու արծիվները, երկրորդին՝ գիսավոր աստղը

Ք.ա. 87թ. օգոստոսին Հայաստանի երկնակամարում երևաց գիսավոր աստղ, որն այսօրվա գիտության մեջ ընդունված է կոչել «Հալլեյի գիսաստղ»: Տարածված պատկե-

բացման համաձայն՝ գիսաստղերի երևալը մեծ փոփոխություններ է առաջ բերում երկրի վրա: Բացառիկ այս իրադարձությունը հայ իրականության մեջ ընկալվեց որպես հայոց տիրակալի հաջողության երկնային նախանշան, քանի որ հենց այդ տարի մեկնարկած պարթևական արշավանքով հիմք դրվեց Տիգրանյան աշխարհակալությանը:

Մեզ են հասել մի քանի տասնյակ դրամներ, որոնց վրա արքայի թագին ավանդական ութաթև աստղի և երկու արծիվների փոխարեն տեղ է գտել գիսավոր աստղը...

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Տիգրան Մեծն անհապաղ անցավ գործողության: Դատելով Ստրաբոնի վերոհիշյալ տեղեկությունից՝ նա հարվածեց նախ Ատրպատականին և Կորդուքին, որոնց արքաներ Միհրդատն ու Զարբիենոսն ընդունեցին Հայոց արքայի տիրապետությունը և մնացին իրենց գահերին: Ատրպատականի արքա Միհրդատը կնության առնելով Տիգրան II-ի դուստրերից մեկին՝ դարձավ նրա անդավաճան դաշնակիցը:

Նկար 9. Աղրաբանա ամրոցի ավերակն այսօր

Նկար 10. Հատված մայրաքաղաք Էքբատանի ավերակներից

Այնուհետև շեշտակի հարված հասցվեց Միջագետքին, ուր կենտրոնացած էին Գոդարզի հիմնական ուժերը, որոնց ջախջախումով նվաճվեց «մնացյալ Միջագետքը»:

(Գիտության մեջ առավել տարածված է կարծիքը, թե «Յոթանասուն հովիտները» Տիգրան II-ը վերադարձրել է այս արշավանքի սկզբին, մինչդեռ, ինչպես նշեցինք վերը, ավելի հավանական է, որ դա տեղի է ունեցել մինչև Ք.ա. 92 թ.):

Ատրպատականին և Միջագետքին տիրելուց հետո հայոց զորքի գլխավոր հարվածն ուղղվեց դեպի Մարաստան, ուր գտնվում էր Պարթևստանի ամառային մայրաքաղաք Էքբատանը: Էքբատանի ճանապարհին Տիգրան Մեծը պաշարեց, գրավեց ու հրկիզեց Աղրաբանա ամրոցը, որտեղ պահվում էին պարթև Արշակունիների գանձերը

Երբ հայոց զորքը մոտեցավ Էքբատանին, խուճապահար պարթևական արքունիքը Տիգրան Մեծից խնդրեց հաշտություն: Դրանով պարթևները հայոց արքային էին զիջում ոչ միայն նվաճված տարածքները, այլև «արքայից արքա» տիտղոսը դրանով ընդունելով նրա գերիշխանությունը

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳԻՐ

Երբ Տիգրանը նոր միայն սկսում էր, նրա ծրագրերն ու հնարավորությունները խիստ համեստ էին, իսկ այժմ նա հպատակեցրել է բազում ժողովուրդների, խորտակել է, ***ինչպես դեռևս չէր հաջողվել ուրիշ մեկին,*** *պարթևների հզորությունը, իսկ Միջագետքը հեղեղել է հելլեններով, որոնց նա ամբողջ բազմություններով բռնագաղթեցրել էր Կիլիկիայից ու Կապադովկիայից:*

Այլ ժողովուրդներից նա արաբական քոչվոր ցեղերին քշեց իրենց նախկին վայրերից և բնակեցրեց իր մայրաքաղաքի մոտ, որպեսզի նրանց օգտագործի առևտրական կարիքների համար: Նրա մոտ շատ թագավորներ կային սպասավորի դրությամբ, իսկ նրանցից չորսին նա մշտապես պահում էր իր մոտ, որպես ուղեկից կամ թիկնապահ. երբ նա գնում էր ձիով, նրանք, կարճ խիտոններ հագած, վազում էին նրա կողքից, իսկ երբ նստած էր լինում և զբաղվում պաշտոնական գործերով, նրանք կանգնում էին նրա շուրջը, ձեռքները կրծքներին...

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ,
հռոմեացի պատմիչ (I– II դարեր)

Որ Պարթևստանն ընդունել է Տիգրան Մեծի գերիշխանությունն ու մտել նրա աշխարհակալության մեջ, պարզորոշ երևում է հռոմեացի պատմիչ Պոմպեոս Տրոգոսի (Ք.ա. I - I դդ.) հաղորդումից, որտեղ Տիգրան Մեծը հիշատակվում է Պարթևստանի արքաների ցանկում Միհրդատ II–ից հետո: Այսինքն՝ Տիգրան Մեծն այս պատերազմի արդյունքում հայտարարվել է նաև Պարթևստանի արքա:

Պոմպեոս Տրոգոսի տեղեկության մեջ կա կարևոր հավելում այն մասին, որ Տիգրան Մեծին *«կոչում էին Աստված»*: Որ Հայոց տիրակալն աստվածացվել է կենդանության օրոք, հայտնի է նրա այն դրամներից, որոնց վրա մակագրված է՝ ***«Տիգրանի՝ արքայից արքայի, Աստծո»***...

Այդ պատերազմի արդյունքում նրա գերիշխանությունն ընդունեցին կամ դաշնակից հայտարարվեցին Միջին Ասիայի սկյութական սակարաուկների ցեղերը (Ամուդարիայի հովտում), որոնք պատերազմի ժամանակ զորք էին տրամադրում Հայոց տիրակալին:

Փաստորեն, Ք.ա. 87–86 թթ. մղած պարթևական մեծ պատերազմով Տիգրան Մեծը ստեղծեց իր աշխարհակալությունը: Այդ պատերազմի արդյունքում և դրանից հետո՝ մինչև Ք.ա. 84 թ., Պարթևստանից բացի Հայոց տերությանն են միանում նաև Կորդուքը, Միգդոնիան, Օսրոենեն: Հայկական աշխարհակալության մեջ կամովին ընդգրկվեց նաև Կոմմագենեի հայոց թագավորությունը, որտեղ իշխում էր Հայկազուն-Երվանդականների մի ճյուղը:

Նկար 11. Իտալացի նկարիչ Ջ. Ֆուգարոյի «Տիգրան Մեծը՝ շրջապատված իրեն ուղեկցող չորս թագավորներով» նկարը (Վենետիկ, Մուրր Ղազար, 1885 թ.)

ԿՈՄՄԱԳԵՆԵ-ԿԱՄԱԽԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոմմագենե-Կամախը երկրամաս է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում: Այն զբաղեցնում է Հայկական կամ Արևելյան Տավրոսի՝ Եփրատից արևմուտք տարածվող հատվածն իր ստորոտով: Կոմմագենե երկրի բարձրագույն գագաթը Նեմրութն է (չշփոթել Վանա լճի արևմուտքում գտնվող Նեմրութի հետ), որի գագաթին Անտիոքոս I Երվանդունին (Ք.ա. 70-34 թթ.) կառուցել է թագավորության գլխավոր սրբավայրը:

Երկիրն առավելապես հայտնի է Կոմմագենե անվամբ, որը երկրի հունարեն անվանումն է: Հնագույն ասորեստանյան, խեթական, լուվիական և հայկական աղբյուրներում այն հայտնի է Կամախ, Կումախա, Կումուխ տարբերակներով:

Նկար 12. Կոմմագենեի մեծ սրբավայրը Նեմրութ լեռան վրա (արևելյան հարթակը)

Նկար 13. Անտիոքոս I Երվանդունին՝ Տիգրանյան թագով, Վահագն-Արտագնես աստծո հետ (Եփրատի Արսամեա)

Մինչև Ք.ա. 201 թ. Կոմմագենե-Կամախը Հայկազուն-Երվանդունիների թագավորության մի մասն էր. այդ են վկայում Նեմրութի սրբավայրի արձանագրությունները, որոնք որպես Անտիոքոս I-ի հայրական գծով նախնիներ հիշատակում են Երվանդ II-ին (Ք.ա. V-IV դդ.), Երվանդ III-ին (որը Գավգամելայի ճակատամարտից հետո անկախացրեց Մեծ Հայքը), Ք.ա. III դարում իշխած Շամին և Արշամին...

Կոմմագենե-Կամախը Սելևկյան տերությունից անկախացավ Ք.ա. 163 թ. Արշամ արքայի թոռ Պտղոմայոս զորավարի գլխավորությամբ: Ք.ա. 80-ական թթ. Կոմմագենեի արքա Միհրդատ Կալլինիկոսը (Հաղթանակողը) կամովին ընդունեց Տիգրանի գերիշխանությունը: Նրա որդի Անտիոքոս I-ը

Ք.ա. 70 թ. գահ բարձրացավ՝ թագադրվելով գիտության մեջ «Տիգրանյան» կամ «Հայկական» կոչվող թագով:

Մինչև թագավորության անկումը՝ Քրիստոսի ծննդյան 72 թ., Կոմմագենե-Կամախի արքաներն իրենց դրամների վրա պատկերում էին «Տիգրանյան» թագը՝ դրանով յուրօրինակ կերպով շեշտելով թագավորության հայկականությունը:

Նկար 14. «Տիգրանյան» կամ «Հայկական» թագը Մարկոս Անտոնիոսի, Օգոստոս Օկտավիանոսի և Կոմմագենեի վերջին դրամների վրա

«Տիգրանյան» կամ «Հայկական» թագը հանդես է գալիս նաև հռոմեական դրամների վրա՝ որպես հայոց թագավորության խորհրդանշան: Այդպիսի դրամներ թողարկեցին Մարկոս Անտոնիոսը Ք.ա. 34 թվականին, իսկ ավելի ուշ՝ Օգոստոս Օկտավիանոսը...

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԻ ԾԱԳՈՒՄԸ

«Տիգրանյան» կամ «Հայկական» թագի ծագումնաբանությանն անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ: Առավել տարածված կարծիքն այն է, որ թագի ծագումը կապվում է Աքեմենյան աշխարհակալության հետ՝ շեշտադրելու համար Առաջավոր Ասիայում այդ տերության ժառանգորդ լինելը: Սակայն պետք չէ մոռանալ, որ Աքեմենյան տերությունն ինքը բազմաթիվ հարցերում ժառանգորդն էր համահայկական Վանի թագավորության (Նաիրի-Բիայնիլի-Արարատ-Ուրարտուի): Ուստի, տրամաբանորեն, «Տիգրանյան» կամ «Հայկական» թագի ակունքները ևս հարկավոր է փնտրել Վանի թագավորությունում:

Նկար 15. Վանի թագավորության ժամանակաշրջանում «Հայկական» կամ «Տիգրանյան» թագի նախօրինակներից (թագից վեր աստղը կամ շրջանակը աստվածայնության ցուցիչ էր)

Եվ իսկապես. Վանի տերության հնավայրերից հայտնաբերված հուշարձաններում գտնում ենք թագի բազմաթիվ պատկերներ, որոնք ակնհայտորեն «Տիգրանյան» կամ «Հայկական» թագի նախօրինակներն են: Ավելին, նույն հուշարձաններում բազմիցս հանդիպում ենք նաև ութաթև աստղի՝ աստվածային և արքայական իշխանության խորհրդանշանի պատկերմանը, որը տեղ է գտնում Տիգրան Մեծի թագի կենտրոնում, երկու արծիվների միջև:

Փաստորեն, այստեղ տեսնում ենք մեծ տիրակալի հավատարմությունը հայրենի ավանդույթներին: Դարեր առաջ բարձրացած համահայկական գերտերության խորհրդանշանները որդեգրելով՝ նա դրանք կրկին բարձրացրեց աշխարհակալության աստիճանի...

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԸ՝ ՍԵԼԵՎԿՅԱՆ ԳԱՀԻՆ

Տիգրանյան տերությունը սահմանակցում էր Սելևկյան պետությանը, որի հիմնական մասը կազմում էր Ասորիքը: Խնդրո առարկա է դառնում վերջինիս նկատմամբ վերաբերմունքի խնդիրը, որն արդեն երկար ժամանակ բգկտվում էր

երկպառակտչական պատերազմներից և չափազանց թուլացել էր: Սելևկյան ավագանին ի վերջո որոշեց երկիրը փրկել՝ որևէ օտար տիրակալ հրավիրելով: Քննարկվեցին բազմաթիվ թեկնածություններ և, ի վերջո, ընտրությունը կանգ առավ Հայոց տիրակալի վրա:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Եղբայրների փոխադարձ ատելությունը, ապա և նրանց որդիներին ժառանգաբար անցած թշնամությունը, անընդհատ պատերազմներ ծնեցին, որոնք ծայրահեղ թուլության հասցրին Ասորիքը ու նրա թագավորներին: Ի վերջո ժողովուրդը դիմեց օտարի օգնությանը և սկսեց փնտրել օտարերկրացի թագավոր: Ոմանք կարծում էին, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մյուսները՝ Եգիպտոսի Պտղոմեոսին...

Բոլորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի շուրջը, որը սեփական ռազմական ուժ ունենալուց բացի, պարթևների թագավորության դաշնակիցն էր ու Միհրդատի խնամին:

Եվ այսպես՝ հրավիրված լինելով Ասորիքի գահին բազմելու, նա 17 տարի շարունակ կառավարում էր ամենայն անդորրությամբ, չէր խանգարում պատերազմներով ուրիշների հանգիստը, և ոչ ոք նրան չէր անհանգստացնում, այնպես որ պատերազմելու անհրաժեշտություն չկար:

ՊՈՄՊԵՈՍ ՏՐՈԳՈՍ,
հռոմեացի պատմիչ (Ք.ա. I–I դարեր)

Ք.ա. 83 թ. Տիգրան Մեծն Անտիոքում բազմեց Սելևկյանների գահին և տիրեց 17 տարի շարունակ: Ուսումնասիրողներից Թ. Ռեյնաքի գնահատմամբ՝ «Սիրիան ազատ շունչ քաշեց, և թեպետ ենթարկվեց նվաստացուցիչ օտար իշխանության, սակայն... ունեցավ խաղաղություն, ապահովություն ու բարեկեցություն»:

Թե ինչ կարևոր դերակատարում ունեցավ Հայոց տիրակալի իշխանությունը Սելևկյան պետության համար, ակնհայտ է թեկուզև մեկ փաստից. Ք.ա. 163-83 թթ. ընթացքում Սելևկյան գահին իշխել էին 19 գահակալներ, որոնցից ոչ մեկը չէր մահացել բնական մահով...

Սելևկյան պետությանը տիրելուց հետո հայոց աշխարհակալության սահմանները հասան Եգիպտոսին: Տիգրանյան տերության մեջ ընդգրկվեց նաև Կիլիկիան, որը մինչ այդ ենթարկվում էր Սելևկյաններին:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Տիգրանը տիրեց Սիրիային՝ (հպատակեցնելով) Եփրատից այն կողմ գտնվող բնակվող բոլոր սիրիական ցեղերին՝ մինչև Եգիպտոս: Միաժամանակ նվաճեց Կիլիկիան, քանզի այն ևս հպատակվում էր Սելևկյաններին և այդ բոլորի վրա ստրատեգոս նշանակելով Բագադատեսին (իշխեց) 14 տարի:

ԱՊՊԻԱՆՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻ,
հույն պատմիչ (II դար)

Սելևկյան գահին Տիգրան Մեծի տիրապետության ժամկետի տարբերությունն ըստ Պոմպեոս Տրոգոսի և Ապպիանոսի (17 և 14 տարի) լիովին բացատրելի է: Առաջինը նկատի ունի իրավական իշխանությունը մինչև Ք.ա. 66 թ. Արտաշատի պայմանագիրը, իսկ երկրորդը՝ փաստացին, քանի որ հայկական զորքը դուրս էր բերվել Սելևկիայից Ք.ա. 69 թ. հռոմեա-հայկական պատերազմի ժամանակ:

Միջերկրական ծովի արևելյան ափի երկրների համար կայունությունից ու խաղաղությունից բացի, Տիգրանյան տերության մեջ ներառումը հնարավորություն էր տալիս անսահ-

մանափակ կերպով օգտվելու ցամաքային առևտրի համաշխարհային մայրուղուց: Այն կապում էր Չինաստանն ու Հնդկաստանը Միջերկրական ծովի ավազանին և պատմության մեջ հայտնի է «Մետաքսի մեծ ճանապարհ» անունով: Վերջինս լիովին գտնվում էր Տիգրան Մեծի վերահսկողության ներքո:

ԿԻԼԻԿԻԱՆ՝ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

Կիլիկիան, որտեղ միջնադարում կբարձրանա հայկական անզուգական մի պետականություն, բուն Հայաստանի հետ արդեն ունեցել էր սերտ շփումներ: Դեռևս Ք.ա. XXVIII-XXVI դարերում այնտեղ էր հասել Հայաստանի վաղ բրոնզի դարի մշակույթի ազդեցությունը, Կիլիկիան որոշ ժամանակ մասն էր կազմել հարավ-հայաստանյան Միտաննի թագավորության (Ք.ա. XVI-XIII դարեր)...

Սելևկյան պետությանը տիրելուց հետո, ինչպես նշվեց, Կիլիկիան Տիգրանյան աշխարհակալության մասը կազմեց: Այդ ժամանակաշրջանում Կիլիկիան առավելապես հայտնի էր իր ծովահեններով, որոնք ստիպված եղան հաշվի նստել Տիգրան Մեծի հետ: Իր հերթին Հայոց տիրակալը շահագրգռված էր միջերկրածովյան ավազանում գործող ծովահեններին իր ազդեցության ոլորտ ներգրավելով: Մինչև Ք.ա. 83 թ. հայկական տիրապետությունը չէր հասել Միջերկրական ծովի ափերին, և Տիգրան Մեծն այնտեղ նավատորմ չուներ: Կայացավ փոխշահավետ մի համաձայնություն, որը հույն մատենագիր Ստրաբոնը բնորոշում է այսպես. ***«Հայերը ծովը հանձնեցին կիլիկեցիներին»:***

Ժամանակին նույն կերպ են վարվել Աքեմենյանները՝ փյունիկիացիներին «հանձնելով» Միջերկրական ծովը (իմա՝ դարձնելով իրենց լիազորը ծովում):

Կիլիկյան ծովահենները գործունեության ազատություն ստացան Միջերկրական ծովում՝ վայելելով Տիգրան Մեծի հովանավորությունը, պարտավորվելով իրականացնել նրա շահերից բխող քաղաքականություն (այդ թվում՝ հակահռոմեական): Կա այդ մասին վկայող ուշագրավ մի փաստ:

Ք.ա. 73 թ. Հռոմը Սելևկյան արքա Անտիոքոս Եվսեբեսի որդիներին ճանաչեց «Սիրիայի արքաներ»՝ նրանց տալով «քարեկամի և դաշնակցի» կարգավիճակ: Նրանք ուղարկվեցին Սիրիա՝ Սելենե-Կլեոպատրա թագուհու հետ իրականացնելու Տիգրան Մեծի դեմ ուղղված հռոմեական քաղաքականությունը: Հատկանշական է, որ երբ արքայազն Անտիոքոսը Սիցիլիայի վրայով հասավ Սիրակուզա, լուր ստացվեց Սիրիայից, որ այնտեղից իրենց դեմ են գալիս ծովահենները: Սարսափած արքայազնը փոխեց ճանապարհը և Սիրիա հասավ միայն Ք.ա. 72 թվին...

Փաստորեն, ի դեմս կիլիկյան ծովահենների Տիգրան Մեծը Միջերկրական ծովում ուներ ռազմածովային ուժեր՝ ընդդեմ հռոմեացիների:

Նկար 16. Կոռիկոսի ծովային ամրոցը Կիլիկիայում

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Տիրելով Միջերկրական ծովի արևելյան ափի քաղաքներին՝ դրանցից մի քանիսին Տիգրան Մեծը շնորհեց «ազատություններ»: «Ազատությունները» մերօրյա հասկացությամբ կարելի է ընկալել որպես լայն ինքնավարության իրավունք: Այդ քաղաքներից էին Լաոդիկեն, Բերիթը (ներկայիս Լիբանանի մայրաքաղաք Բեյրութը), Արադոսը, Տրիպոլիսը, Ապամեան և այլք, որոնք զրկված էին նման իրավունքներից Սելևկյանների իշխանության ներքո:

«Ազատություններ» ստացած քաղաքներից Լաոդիկեն և Բերիթը, ի նշան երախտագիտության, իրենց նոր քաղաքային տոմարը Ք.ա. 81 թ. սկսեցին հաշվել Տիգրան Մեծի շնորհումից սկսած և իրենց քաղաքային դրամների վրա թվականները նշում էին նոր տոմարով: ***Հայոց տիրակալն իր նվաճումներում անգամ ազատարար էր:***

Նման իրադրություն ստեղծվեց պարթևական մեծ արշավանքից հետո. սեփական դրամներ հատեցին Քարակենեի, Էլյումայիսի և Պարսքի թագավորությունները, որոնք նախկինում Պարթևստանի տիրապետության տակ էին գտնվում՝ զուրկ նման իրավունքից: Սեփական դրամահատությունը ենթադրում է նաև որոշակի իրավունքներ ու արտոնություններ, ինչը ևս չմնաց առանց գնահատման: Մատենագիրների հաղորդման համաձայն՝ Տիգրանակերտի ճակատամարտի նախօրյակին Տիգրան Մեծի կոչով նրան օգնության էին շտապել «Բաբելոնյան ծովի» (Պարսից ծոցի) ափերին բնակվող Քարակենեի արաբական թագավորության զորագնդերը...

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵԳԻՊՏՈՍԻՆ

Ք.ա. 88 թվականին հռոմեացիների դավերի հետևանքով Եգիպտոսից վտարանդվում և Միհրդատ Պոնտացու մոտ ապաստան է գտնում եգիպտական արքայազն Պտղոմեոսը: Միհրդատ Եվպատորը, սակայն, ի վիճակի չեղավ իր ազդեցությունը հասցնել մինչև Եգիպտոս, ուստի եգիպտական արքայազնի միակ հույսը մնաց Միհրդատ Եվպատորի դաշնակից Տիգրան Մեծը, որը Ք.ա. 83 թվականից արևելամիջերկրական ավազանում ամենաազդեցիկ ուժի կրողն էր:

Ք.ա. 80 թ. հռոմեացիները Եգիպտոսում գահ բարձրացրեցին Պտղոմեոս XI-ին, որը նախապես Պտղոմյան թագավորությունը (Եգիպտոսն ու Կիպրոսը) կտակել էր Հռոմին: Նրա գահակալման 19-րդ օրը եգիպտացիներն ապստամբեցին դավաճան գահակալի դեմ, ինչի արդյունքում իշխանության եկավ Ք.ա. 88 թ. վտարանդված արքայազն Պտղոմեոսը՝ դուրս մղելով հռոմեական ուժերին:

Ցիցերոնի հաղորդման համաձայն՝ մինչ այդ արքայազն Պտղոմեոսը գտնվում էր Սիրիայում, այսինքն՝ Տիգրան Մեծի մոտ: Նա Տիգրան Մեծի տրամադրած օգնական զորքով Սիրիայից մտավ Եգիպտոս և հռչակվեց Պտղոմեոս XII Ավլետոսը (Սրնգահարը): Փաստորեն, Հայոց տիրակալի շնորհիվ Եգիպտոսը փրկվեց հռոմեական նվաճումից:

Եգիպտոսը, բնականաբար, դարձավ հայամետ քաղաքականության կրող: Դժվար է ասել, թե ինչ ծրագրեր է ունեցել Տիգրան Մեծը՝ կապված Եգիպտոսի հետ: Սակայն ճակատագիրը շատ դաժան ու անարդար դուրս եկավ Հայոց գահի նկատմամբ: Պտղոմեոս XII-ն Եգիպտոսի ապագա հանրահայտ թագուհի Կլեոպատրա VII-ի հայրն էր: Հայոց տիրակալը փրկեց Պտղոմեոսին, մինչդեռ նրա դուստր Կլեոպատրան մահապատժի ենթարկեց Տիգրան Մեծի որդուն՝ Արտավազդ II-ին...



Նկար 17. Տեսարան Եգիպտոսից

ՆԱԲԱԹԵԱՆ՝ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

Սելևկյաններին տիրելուց հետո, Ապպիանոսի հաղորդման համաձայն, հայկական աշխարհակալության սահմանը տարածվեց «Եփրատից այն կողմ... մինչև Եգիպտոս»: Դա Ք.ա. 83 թվականին էր:

Մինչ այդ Կոյլե-Սիրիայի (Խորագույն Ասորիք, որի կենտրոնը Դամասկոսն էր) և Փյունիկիայի համար պայքարում էր Նաբաթեայի արքա Արեթաս (Հարիթաթ) III-ը (Ք.ա. 87-62 թթ.): Հովսեպոս Փլավիոսի մի տեղեկությունից պարզ է դառնում, որ Փյունիկիան և Կոյլե-Սիրիան գրավվել են նախ նաբաթեացիների, ապա Տիգրան Մեծի կողմից: Հայոց տիրակալի իշխանությունը ճանաչեցին և փյունիկյան քաղաքները, և Կոյլե-Սիրիայի արքա Պտղոմեոս Մեննայոսը (Ք.ա. 85-40 թթ.):

Կոյլե-Սիրիայից մինչև Եգիպտոս տարածվում էր Նաբաթեան, որից էլ խլվել էին Փյունիկիան և Կոյլե-Սիրիան: Դա նշանակում է, որ պարտված նաբաթեացիները ոչ միայն

կորցրել էին նշված տարածքները, այլև պարտվելով՝ իրենք ևս ճանաչել էին հայերի գերիշխանությունը:

Փյունիկիայի և Կոյլե-Սիրիայի քաղաքներն արագորեն սկսեցին կարևոր դերակատարում ունենալ հայկական աշխարհակալության մեջ: Փյունիկյան քաղաքների մասին արդեն խոսվեց, իսկ Կոյլե-Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում Ք.ա. 72-69 թթ. գործում էր Տիգրան Մեծի չորրորդ գլխավոր դրամահատարանը (առաջին երեքը գտնվում էին Արտաշատում, Անտիոքում և Տիգրանակերտում):

ՀՌՈՄԻ ԽԱՐԴԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀՐԵԱՍՏԱՆԻ ԱՆՀՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ք.ա. 83-73 թթ. Միջերկրականի արևելյան ափի համար եղավ խաղաղության և շենության տասնամյակ: Ք.ա. 73 թ. այդ խաղաղությունը խախտվեց՝ Հռոմի հրահրմամբ:

Նկար 18. Տեսարան Նաբաթեայի մայրաքաղաք Պետրայից

Այդ թվականին եռանդուն կերպով սկսեց գործել հռոմեական դրածո Սելենե-Կլեոպատրան, որի կերպարին արժե անդրադառնալ երկու խոսքով: Նա եգիպտական արքայադուստր էր, որն ամուսնացավ Սելևկյան Անտիոքոս VIII արքայի հետ: Նրա ամուսինը սպանվեց հարազատ եղբոր կողմից, որը գրավեց գահը: Սելենե-Կլեոպատրան ամուսնացավ իր ամուսնուն սպանող եղբոր հետ: Սելենե-Կլեոպատրայի ավագ որդին սպանեց մոր հետ ամուսնացած իր հորեղբորը... Սակայն դրանից հետո Սելենե-Կլեոպատրան ամուսնացավ երրորդ անգամ, այս անգամ սպանված երկրորդ ամուսնու ավագ որդու հետ, որը ծնվել էր մեկ այլ կնոջից...

Սելենե-Կլեոպատրան խռովություն բարձրացրեց փյունիկյան Պտղոմայիս քաղաքում, որի հետ միաժամանակ Հռոմի դրդմամբ Տիգրան Մեծի դեմ ռազմական գործողություններ սկսեցին Նաբաթեայի և Հրեաստանի (Հուդայի) թագավորությունները:

Դրանով Հռոմը փորձում էր և՛ իր խախտված դիրքերը վերականգնել Միջերկրականի արևելքում, և՛ կաշկանդել Տիգրան Մեծին, որպեսզի նա չկարողանա աջակցել Միհրդատ Եվպատորին Ք.ա. 74 թ. սկսած Միհրդատյան երրորդ պատերազմում:

Դատելով եղած հաղորդումներից՝ հայոց զորքը Կոյլե-Սիրիայի արքա Պտղոմեոս Մեննայոսի աջակցությամբ թույլ չի տվել, որ միավորվեն նաբաթեացիների և հրեական բանակները, և Դամասկոսի մատույցներում ջախջախել է նաբաթեացիներին: Բարդ վիճակում հայտնված հրեական բանակը, որի առաջնորդը արքայազն Արիստոբուլոսն էր, ստիպված էր վերադառնալ «չգործելով նշանակալից որևէ բան» (Հովսեպոս Փլավիոսի բնորոշմամբ):

Հռոմեամետ հարավային դաշինքը Տիգրան Մեծի դեմ ձախողվեց: Նաբաթեան պարտվեց, իսկ Սելենե-Կլեոպատրան պաշարվեց Պտղոմայիսում և որոշ ժամանակ անց գերվելով՝ մահապատժի ենթարկվեց: Հրեաստանի թագուհին լավ գիտակցում էր իր քաղաքական մեծ սխալը: Ուստի երբ Տիգրան Մեծը գտնվում էր դեռևս Փյունիկիայում, նախապես

նա ուղարկեց իր դեսպաններին՝ հայտնելու Հրեաստանի կողմից հայոց տիրակալի գերիշխանության ճանաչումը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Այդ ժամանակ էլ լուր է հասնում, թե Հայոց թագավոր Տիգրանը երեսուն բյուր զորքով ներխուժել է Սիրիա և գալիս է Հրեաստանի դեմ: Սա, բնականաբար, ահաբեկեց թագուհուն և ժողովրդին: Ուստի նրանք բազում և արժանավայել ընծաներ ուղարկեցին նրան և դեսպաններ, երբ նա դեռևս պաշարում էր Պտղոմայիս (քաղաքը), քանի որ Սելենե թագուհին, որը կոչվում էր նաև Կլեոպատրա, այդ ժամանակ տիրում էր Սիրիային և հորդորել էր բնակիչներին դռները փակել Տիգրանի առաջ...

Դեսպանները, հանդիպելով նրան, խնդրում էին բարենպաստ պայմաններ շնորհել թագուհուն և ժողովրդին: Իսկ նա, գնահատելով այն, որ նրանք ժամանել են այդքան հեռու տարածությունից, լավագույնս հուսադրեց...

ՀՈՎՍԵՊՈՍ ՓԼԱՎԻՈՍ,
հրեա պատմիչ (I – II դարեր)

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Նախորդ էջերում ընդհանուր գծերով ներկայացվեց Տիգրանյան աշխարհակալության ստեղծումը, որը կատարվեց քառորդ դարում՝ Ք.ա. 95–70 թթ. ընթացքում: Այս ժամանակամիջոցում տեղի ունեցան այլ իրադարձություններ ևս, որոնց չանդրադարձանք:

Դրանցից է, օրինակ, Բաբելոնյան աստղաբաշխական սեպագիր մի արձանագրության հաղորդումը, ըստ որի՝ Ք.ա. 82 թ. հայոց զորքերն արշավել են դեպի Տիգրիսի վրա գտնվող



Քարտեզ 4. Հայոց աշխարհակալությունը Տիգրան Մեծի օրոք

Սելևկիա քաղաքը: Թե ինչ կապակցությամբ է եղել արշավանքը, պարզ չէ. հայտնի է, որ այն առաջնորդում էր արքայազն Տիգրանը (Տիգրան Կրտսերը): Չանդրադարձանք նաև հայկական զորքերի կողմից Կապադովկիայի երրորդ անգամ ռազմակալմանը, որի հետևանքով այդ երկիրն ընդգրկվեց Տիգրանյան տերության մեջ (տարբեր ուսումնասիրողներ այդ արշավանքը թվագրում են Ք.ա. 77 կամ 74 թ.):

Ամփոփելով Տիգրանյան տերության ստեղծման պատմությունը՝ կարող ենք արձանագրել հետևյալը: Տիգրան Մեծը քառորդ դարում ստեղծեց հզոր մի աշխարհակալություն, որի սահմաններն ու քաղաքական ազդեցության ոլորտները ձգվում էին Եգիպտոսից և Կարմիր ծովից մինչև Կովկասյան լեռներ, Կասպից ծով և Ամուդարիայի հովիտ, Սև ծովից ու Փոքր Ասիայի կենտրոնից մինչև Պարսից ծոց և Հնդկական օվկիանոս, Միջերկրական ծովից մինչև Հնդոսի ավազան:

Հայոց տերությունը՝ գերիշխանության ներքո գտնվող երկրներով և քաղաքական ազդեցության ոլորտներով հանդերձ կազմում էր շուրջ 3 մլն. քառակուսի կմ տարածք:

Նկար 19. Սելևկյան մեծ քաղաքներից Ապամեայի ավերակներն այսօր

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԱՆՎԱՄԲ ՆՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Ստեղծված աշխարհակալության մեջ Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատը հայտնվել էր հյուսիսային ծայրամասում: Տիգրան Մեծի երկրորդ մայրաքաղաքը, սկսած Ք.ա. 83 թվականից, Անտիոքն էր՝ Սելևկյանների մայրաքաղաքը, որը գտնվում էր հայոց հողից դուրս:

Ք.ա. 80-ական թթ. անհրաժեշտություն առաջացավ աշխարհակալության համար նոր մայրաքաղաք հիմնադրելու: Տիգրան Մեծն, անշուշտ, կարող էր նոր մայրաքաղաք հռչակել նվաճված երկրների մայրաքաղաքներից կամ խոշորագույն քաղաքներից մեկը, սակայն նա չգնաց այդ քայլին, թերևս, համոզված, որ տիրակալի գլխավոր տունը պետք է գտնվի հայրենի հողում: Եվ նա նոր մայրաքաղաք Տիգրանակերտը հիմնեց մի վայրում, որը և՛ հայոց հողում էր, և՛ համեմատաբար կենտրոնական դիրք էր գրավում տերության մեջ:

Դա այն վայրն էր, որտեղ Ք.ա. 95 թ. պատանդությունից վերադառնալով՝ թագադրվել էր արքայազն Տիգրանը: Փաստորեն, դեռևս պատանդության մեջ գտնվելով՝ նա մշակել էր աշխարհակալության հասնելու մի ծրագիր և Հայաստան մտնելուց առաջ արդեն իր մտապատկերում ուներ ապագա աշխարհակալության ուրվագիծը, որի հետագա մայրաքաղաքի տեղում էլ կատարեց իր թագադրությունը:

Ք.ա. 95 թ. առաջին հայացքից թվացյալ կարգի խախտում ընկալվող այդ քայլը բոլորին հասկանալի դարձավ շուրջ երկու տասնամյակ անց: Մեծն Տիգրանը ծրագրեր էր կազմում և իրագործում տասնամյակների հեռավորությամբ:

Եվ կառուցվեց մեծ տերությանը վայել, մեծաշուք և հրաշագեղ մի քաղաք՝ իր ժամանակի աշխարհի մեգապոլիսներից մեկը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով:

Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ:

ԱՊՊԻԱՆՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻ,
հույն պատմիչ (II դար)

Քաղաքը շրջապատված էր 50 կանգուն, այսինքն՝ 25 մետր բարձրությամբ պարիսպով, ուներ անառիկ միջնաբերդ: Տիգրանակերտն Արևելքի նշանավոր քաղաքներից էր, արհեստագործության, առևտրի ու մշակույթի խոշոր կենտրոն: Այն ուներ իր թատրոնը:

Կարճ ժամանակամիջոցում կառուցվեց մեծ ու շքեղ մի քաղաք: Ուշագրավ է, թե ինչպիսի նախանձախնդրությամբ են հայերն արագորեն ծաղկեցրել իրենց նոր մայրաքաղաքը. օտար պատմիչի վկայությամբ՝ հայերը դա անում էին «հանուն արքայի նկատմամբ տածած սիրո և հարգանքի»:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Տիգրանակերտը լի էր գանձերով, շքեղ կառույցներով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծատոհմիկները, հանուն արքայի նկատմամբ տածած սիրո և հարգանքի, միմյանց հետ մրցում էին քաղաքի շենության ու ընդարձակման համար:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ,
հռոմեացի պատմիչ (I – II դարեր)

Նշենք, որ մինչ օրս շարունակվում են բանավեճերը մայրաքաղաք Տիգրանակերտի գտնվելու վայրի առնչությամբ: Այդ հարցին վերջնական պատասխան կարող են տալ ապագա հնագիտական պեղումները...

Հայոց տիրակալը կառուցեց երկրի համար կենսական նշանակություն ունեցող Արքունի պողոտան, որը կապում էր հին մայրաքաղաք Արտաշատը Տիգրանակերտին:

Տիգրանակերտ մայրաքաղաքից բացի, Մեծն Տիգրանն իր անունով հիմնադրեց ևս մի քանի բնակավայր: Տիգրանակերտ անվամբ քաղաքներ հիմնադրվեցին Հյուսիսային Միջագետքում (ներկայիս Թել-Արմանի հնավայրի տեղում), Ասորիքի հյուսիսում (Զեգմայի մոտ), Ուտիք և Արցախ նահանգներում, ևս երկու բնակավայր՝ Տիգրանավան անվամբ՝ Գողթնում ու Մարաստանում:

Ինչպես տեսնում ենք, բոլոր նշանավոր միապետերի նման Տիգրան Մեծը ձգտել է իր անունը հավերժացնել նաև նոր բնակավայրեր հիմնելով:

Նկար 20. Արցախի Տիգրանակերտի պեղված հատվածներից (հայտնաբերվել է 2006 թ.)

Նկար 21. Հռոմի Կոլիզեումը

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՐՏԱԿԻՆ

Հռոմի և Մեծ Հայքի միջև անուղղակի հակամարտությունն սկսել էր դեռևս Ք.ա. 93 թ. Կապադովկիայի դեմ կատարված արշավանքով: Այն ավելի ընդգծվեց Ք.ա. 92 թ. հռոմեա-պարթևական դաշինքով, որն ուղղված էր ընդդեմ Մեծ Հայքի ու Պոնտոսի:

Հռոմն ի վիճակի չեղավ պատասխանելու Ք.ա. 80 թ. Եգիպտոսում Տիգրան Մեծի միջամտությանը: Իր հերթին Ք.ա. 73-70 թթ. Հռոմը փորձեց Միջերկրականի արևելյան ծովափին Տիգրան Մեծի դեմ դուրս բերել իր դրածո Սելենե-Կլեոպատրային, Նաբաթեայի և Հրեաստանի թագավորություններին: Ինչպես նշվեց, այդ փորձը լիակատար ձախողում ունեցավ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Տիգրան Մեծը ևս ոչ միայն ուշի-ուշով հետևել է Հռոմի տիրապետության սահմաններում կատարվող կարևոր իրադարձություններին, այլև փորձել է միջամտել դրանց:

Ք.ա. 73–71 թթ. Հռոմը ցնցվում էր ստրուկների ամենահուժկու ապստամբությունից, որի գլուխ էր կանգնած Սպարտակը: Ք.ա. 71 թ. սկզբին հռոմեացի զորավար Կրասոսը երեք կողմից ծովով, իսկ չորրորդից իր բանակով պաշարելով՝ փորձում էր Իտալիայի հարավում (Բրուտիական թերակղզում) սովամահ անել ապստամբներին: Սակայն Սպարտակը «ինչ-որ տեղից» ստացավ օգնական հեծելազոր, ինչի շնորհիվ ճեղքեց պաշարման օղակը և շարժվեց դեպի հյուսիս-արևելք՝ Հունաստան տեղափոխվելու մտադրությամբ: Եթե ապստամբները բարեհաջող հասնեին ծովափ, օգնության եկող նավատորմը Հունաստան պետք է փոխադրեր ապստամբների շուրջ 60-հազարանոց բանակը: Այդ ծրագիրը խափանվեց, քանի որ ապստամբությունը ճնշվեց Ք.ա. 71 թ. մարտին:

Ո՞վ կարող էր ուղարկել օգնական հեծելազոր, իսկ հետո՝ նաև հսկայական բանակը ծովով փոխադրելու ընդունակ նավատորմ:

Միջերկրական ծովի ավազանում միայն երկու տիրակալներ էին, որ այդ ժամանակ կարող էին հակադրվել Հռոմին և օգնություն ուղարկել վերջինիս ներքին թշնամուն՝ Միհրդատ Պոնտացին ու Տիգրան Մեծը: Սպարտակի՝ Հունաստան տեղափոխվելու ծրագիրը համապատասխանում էր հենց նրանց շահերին:

Միհրդատ Եվպատորի թեկնածությունն այս պարագայում բացառվում է, քանի որ նա Ք.ա. 73 թ. վերջին պարտություն կրելով հռոմեացիներից՝ նահանջել էր, ոչնչացել էր նրա նավատորմի մեծ մասը: Ք.ա. 72 թ. երկրորդ կեսին Լուկիոս Լիկինիոս Լուկուլլոսի ղեկավարած հռոմեական բանակները նրան հետապնդում էին արդեն իր իսկ երկրում՝ Պոնտոսում:

Մնում է միայն մեկ հակառակորդ՝ Տիգրան Մեծը: Միայն նրա ուղարկած հեծելազորը կարող էր օգնել Սպարտակին, և նա կարող էր պատրաստակամություն հայտնել իր կամ իր դաշնակից կիլիկյան ծովահենների նավերով Հունաստան տեղափոխել ապստամբ բանակը: Դա նաև յուրօրինակ պատասխան հարված կլիներ Հռոմին՝ Ք.ա. 73-70

թվականներին Միջերկրական ծովի արևելքում կազմակերպած հակահայկական խարդավանքների դիմաց...

Փաստորեն, մենք տեսնում ենք ավելի քան քսանամյա լուռ, անուղղակի և միջնորդավորված հակասություն Հռոմի և Հայաստանի միջև, որն, ի վերջո, պետք է պայթեր՝ Ք.ա. 69 թ. վերածվելով հռոմեա-հայկական բացահայտ պատերազմի:

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԸ՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի հետ ուղղակի բախումից հետո հռոմեացի պատմիչները ջանք չխնայեցին երևակայական ու ծիծաղելիության աստիճանի հասնող ստեր հորինելու հայերի և անձամբ Տիգրան Մեծի մասին: Այդ երևույթին մենք դեռ կանդրադառնանք: Սակայն կարևոր և ուշագրավ է այն, թե մինչև բախման մեջ մտնելը հենց իրենք ինչպիսի գնահատական էին տալիս իրենց ապագա հակառակորդին:

Պլուտարքոսը Լուկուլլոսի կենսագրության մեջ բերում է շատ հետաքրքիր մի դրվագ: Հռոմեացի զորավարները Լուկուլլոսին մեղադրում էին դանդաղկոտության մեջ, քանի որ նա չէր փորձում միանգամից վերջնական հարված տալ Միհրդատ Եվպատորին, այլ հապաղելով՝ հնարավորություն էր ընձեռում ուժեր հավաքելու: Լուկուլլոսն իր քայլն արդարացնում է Տիգրան Մեծի հետ բախվելու հեռանկարից զգուշանալով: Մեջբերենք նրա խոսքը՝ արտասանված Ք.ա. 71 թ., որում տրվում է Հայոց տիրակալի գնահատականը.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Ինձ էլ այդ է պետք,- հակաճառեց նրանց նա,- ես դիտավորյալ եմ դանդաղում: Թող արքան նորից հզորանա և կռվի համար բավականաչափ զորք հավաքի, այնպես, որ մնա տեղում և մեր մոտենալուց չփախչի:

... Մինչև Հայաստան ընդամենը մի քանի օրվա ճանապարհ է, իսկ Հայաստանում թագավորում է Տիգրանը, արքայից արքան, որն իր զորքով փակում է պարթևների ճանապարհը դեպի Փոքր Ասիա, իսկ հունական քաղաքային համայնքները վերաբնակեցնում է Մեդիայում, այդ արքան նվաճել է Ասորիքն ու Պաղեստինը, իսկ Սելևկյան տոհմի թագավորին մահվան մատնել ու գերության տարել նրա կանանց ու դուստրերին: Եվ նման մարդը Միհրդատի բարեկամն է, նրա փեսան: Եվ եթե Միհրդատը դիմի նրա պաշտպանությանը, ապա նա Միհրդատին չի թողնի փորձանքի մեջ և պատերազմ կսկսի մեր դեմ: Չլինի այնպես, որ շտապելով Միհրդատին դուրս քշել իր տիրույթներից, հանդիպենք Տիգրանին ու փորձանքի գանք: Քանզի նա արդեն վաղուց առիթ է փնտրում մեր դեմ պատերազմելու. իսկ նա առավել հարմար ի՞նչ առիթ կարող է գտնել, քան արքայական ազգակցին փորձանքի մեջ օգնելը»:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ,
հռոմեացի պատմիչ (I – II դարեր)

Նկար 22. Հատված Նփրկերտի ամրոց-հնավայրից, որը որոշ գիտնականների կարծիքով կարող էր լինել մայրաքաղաք Տիգրանակերտը

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Ք.ա. 74 թ. սկսած Միհրդատյան երրորդ պատերազմում Միհրդատ Եվպատորը պարտություն կրեց հռոմեական զորքերից: Ք.ա. 71 թ. նա փախուստի դիմեց և ապաստանեց Հայաստանում: Լուկուլլոսը պատվիրակություն ուղարկեց Հայաստան՝ խնդրելով իրեն հանձնել Հռոմի երդվյալ թշնամուն: Սակայն Տիգրան Մեծը ոչ միայն չհանձնեց իր դաշնակցին ու ազգականին, այլև չէր շտապում վերադառնալ Հայաստան և շարունակում էր ավելի քան մեկ տարի Միջերկրականի արևելքում զբաղվել իր տերության գործերով: Հավանաբար, պատճառն այն է, որ իր հետախուզության տվյալներից Տիգրան Մեծը տեղյակ էր, որ Հռոմի սենատը չի լիազորել Լուկուլլոսին պատերազմելու իր դեմ:

Լուկուլլոսը ստիպված էր ատամները սեղմած սպասել հարմար մի առիթի: Նա Փոքր Ասիայում կատարեց հաղթահանդես Պոնտոսի դեմ տարած հաղթանակի առթիվ, սակայն ինքնին հասկանալի էր, որ քանի դեռ ողջ է Միհրդատ Եվպատորը և պաշտպանված Տիգրան Մեծի կողմից, Հռոմի անվտանգությունը չէր կարող երաշխավորված լինել:

Ք.ա. 69 թ. գարնանը, երբ Տիգրան Մեծը գտնվում էր Փյունիկիայի տարածքում, Լուկուլլոսը ներխուժեց Հայաստան և պաշարեց Տիգրանակերտը: Նրա զորքի թիվը (դաշնակիցների հետ միասին) անցնում էր 45 հազարից:

Դա անսպասելի էր բոլոր առումներով, նաև՝ ռազմավարական: Առանց համապատասխան պատրաստության Հռոմը չէր սկսի պատերազմ Արևելքի հզորագույն հարևանի դեմ: Միակ բացատրությունը կարող է լինել այն, որ Լուկուլլոսն իր հետախույզների միջոցով տեղեկացել էր Հայոց թագուհու Տիգրանակերտ ժամանման մասին և որոշել կայծակնային գրոհով գրավել սահմանին մոտ գտնվող մայրաքաղաքը: Գերված թագուհուն հետ ստանալու՝ իր պատիվը փրկելու

Նկար 23. Լուկուլլոս

համար Տիգրան Մեծը ստիպված կլիներ հանձնել Միհրդատ Եվպատորին, մանավանդ, եթե գերված թագուհին լիներ հենց Միհրդատի դուստր Կլեոպատրան: Սակայն Լուկուլլոսը չարաչար սխալվեց...

ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Տիգրան Մեծը երեք հազարանոց առաջապահ հեծյալ մի գունդ ուղարկեց Հայաստան Մերուժան զորավարի գլխավորությամբ, ապա ինքն անձամբ թիկնապահ գնդով շտապեց Հայաստան՝ հրամայելով բանակի հիմնական ուժերին հետևել իրեն:

Երբ Տիգրան Մեծը 6000-անոց թիկնապահ գնդով հասավ Հայաստան, Տիգրանակերտ մայրաքաղաքը պաշարված էր: Այդ թիկնապահ գունդը կատարեց հատուկ նշանակության բացառիկ մի գործողություն: Փոքրաթիվ այս զորագունդը կարողացավ կատարել հերոսական գործողություն՝ ճեղքեց հռոմեական 45 հազարանոց բանակի պաշարումը և մտավ մայրաքաղաք: Շատ ավելի բարդ էր լինելու հետդարձի գործողությունը, որն արքայական թիկնազորն իրականացրեց բացառիկ հերոսականությամբ:

Երկրորդ անգամ ճեղքելով բազմապատիկ հռոմեական բանակի պաշարման շղթան, հայոց քաջերը մայրաքաղաքից անվտանգ դուրս բերեցին թագուհուն, կանանոցը և ողջ արքայական գանձարանը: Լուկուլլոսի ծրագիրը խափանվեց:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Նա (Տիգրանը) նույնպես զորք ուղարկեց Տիգրանակերտ քաղաքը, որի մեջ գտնվում էր նրա կանանոցը: Սրանք գալով այնտեղ և նետաձգությամբ կտրելով հռոմեական ճամբարից դուրս գալու ճանապարհը դուրս բերեցին գիշերով նախապես Տիգրանի կանանոցն ու թանկագին ամենաարժեքավոր իրերը:

ՄԵՄՆՈՆ,
պոնտացի պատմիչ (II դար)

Տիգրանը հավաքելով մոտ 25 բյուր հետևակ և 5 բյուր հեծյալ, նախ նրանցից մոտ 6000-ին ուղարկեց Տիգրանակերտ, որոնք հռոմեացիների միջով մտնելով բերդ, այնտեղից խլեցին ու դուրս բերեցին թագավորի հարճերին:

ԱՊՊԻԱՆՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻ,
հույն պատմիչ (II դար)

Արքայական թիկնազորի հատուկ նշանակության այս գործողությունն իրավամբ կարող է համարվել ռազմարվեստի համաշխարհային պատմության գոհարներից մեկը...

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Ք.ա. 69 թ. աշնանը Տիգրան Մեծի հիմնական ուժերը գտնվում էին Տիգրանակերտի մերձակայքում: Օգնական գնդեր էին եկել նաև ենթակա երկրներից:

Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցավ Տիգրանակերտի ճակատամարտը, որին մասնակից հայկական բանակի թվի մասին աղբյուրների տեղեկությունները չափազանց տարբերվում են իրարից: Պլուտարքոսն ու Ապպիանոսը ներ-

կայացնում են 300 հազար, իսկ փոքրասիական ծագումով պատմիչները, որոնք առավել չեզոք են, ուստի՝ ավելի վստահելի, հաղորդում են անհամեմատ փոքր թվեր. Մեմնոնը՝ 80 հազար, իսկ Փլեգոնը՝ 70 հազար:

Նկար 24. Իտալացի նկարիչ Ջ. Ֆուզարոյի «Տիգրան II-ի կանանոցի և արքունական զանձերի դուրսբերումը պաշարված Տիգրանակերտից» նկարը (Վենետիկ, Սուրբ Ղազար, 1885 թ.)

Ամենայն հավանականությամբ, 300 հազարը Տիգրան Մեծի ողջ տերության բանակների թիվն է՝ նվաճյալ երկրների զորքերով հանդերձ: Իսկ Տիգրանակերտի ճակատամարտին հայկական կողմից մասնակցել է 70-80 հազար զինվոր: Հռոմեացի պատմիչները Լուկուլլոսի փառքը մեծացնելու համար ներկայացրել են Տիգրանյան ողջ տերության բանակների թիվը, որոնք բոլորը միաժամանակ մեկ տեղում անգամ տեսականորեն չէին կարող հավաքվել:

Ճակատամարտն ավարտվել է հայկական կողմի անհաջողությամբ: Թե ինչը կարող էր լինել դրա պատճառը, կփորձենք հասկանալ քիչ անց: Այստեղ ապշեցուցիչ է, թե ինչ կեղծիքներ են սկսում հորինել հռոմեացի պատմագիրները Տիգրան Մեծի մասին, երբ նրա զորքերն ուղղակիորեն բախվում են հռոմեացիների հետ:

Ըստ Պլուտարքոսի՝ հայերի հետևակից ավելի քան 100 հազար սպանվել էին, իսկ հեծելազորը (որը բաղկացած էր 55 հազար հեծյալից) գրեթե լիովին ոչնչացել էր, մինչդեռ հռոմեական բանակը տվել է ընդամենը 5 սպանված: Հայերի շուրջ 150 հազարի դիմաց հռոմեացիների 5 զոհ տալուն կարելի էր հավատալ, եթե Ք.ա. 1-ին դարում Հռոմն ունենար ինքնաթիռներ և միջուկային զենք...

Ինքը՝ Պլուտարքոսը, մոռանալով իր իսկ կեղծիքի մասին՝ մեկ այլ աշխատանքում («Խնջույքի զրույցներ») բերում է Տիգրանակերտի ճակատամարտում հայերի տված զոհերի միանգամայն այլ թիվ՝ 10 հազար...

ՀՌՈՄԵԱՑԻ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Տիգրան Մեծի մասին հորինված նման անտրամաբանական կեղծիքների դեռ կհանդիպենք: Դրանց առնչությամբ կարելի է պարզապես կրկնել XX դարի մեծագույն պատմաբաններից մեկի՝ Նիկողայոս Ադոնցի սթափ գնահատականը. «Երևակայական մանրամասները, ծիծաղաշարժ տեսարանները, որոնցով հարուստ են ստրկամիտ գրողների նկարագրությունները, կոչված են ցուցահանելու հաղթանակած հռոմեացիների իմաստնությունն ու ճարպկությունը և ցուցադրելու նրանց պարտված հակառակորդների ոչնչությունը: Իրականությունը, սակայն, ոչ մի կապ չունի նման հերյուրանքների հետ: Բոլոր այն դեպքերում, երբ հռոմեացիների հնարագիտությունը հակադրվում է նրանց հակառակորդնե-

րի հիմարությանը, մենք կարող ենք վստահ լինել, որ գործ ունենք միտումնավոր կեղծիքի հետ, որը պատմական ոչ մի արժեք չի ներկայացնում»:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Պատմիչների մի մասը՝ անտեսելով դեպքերի նկարագրությունը, կանգ է առնում հրամանատարների ու զորավարների գովերգման վրա՝ յուրայիններին երկինք հանելով, իսկ թշնամիներին չափազանց նսեմացնելով...

Պատմությունը տանել չի կարող ոչ մի տեսակ, անգամ պատահական ու աննշան սուտ... Հեքիաթային պատմություններն ամենևին էլ չեն զարդարում պատմությունը... եթե իհարկե, դու ի նկատի ունես ոչ թե ամեն տեսակի թափթփուկների, այլ մարդկանց, որոնք լսում են խստապահանջ դատավորի պես. [նրանք] կուշտ կծիծաղեն, եթե տեսնեն, թե ինչ արհեստական ձևով են այդ գործում սոսնձված այլածին և իրար չհամապատասխանող մասերը...

Հիշիր հետևյալը՝ լավ է, եթե գրես հետագա սերունդների համար [այնպես], որ քո մասին ևս ասեն. «Սա, իրոք, ազատ մարդ էր, անկաշառ, հեռու կեղծավորությունից ու ստրկամտությունից»...

ԼՈՒԿԻԱՆՈՍ ՍԱՄՈՍԱՏՑԻ,
հռոմեացի պատմիչ (II դար)

Սակայն ինչո՞ւ էին հռոմեացի պատմիչները ծիծաղելիության աստիճանի հասնող ստեր հորինում, ինչը քննադատվել է նաև հենց իրենց՝ հռոմեական պատմագրության որոշ ներկայացուցիչների կողմից: Պատասխանը մեզ համար ավելի քան հստակ է. դա պետք էր հռոմեական կրթական համակարգին, հարկավոր էր թեկուզև ստերով կերտել իդեալական հերոսների կերպարներ, որոնց դեմ միշտ ջախջախվել կամ խոնարհվել են թշնամիները: Այդ հերոսներով Հռոմի քաղաքացիները պետք է դաստիարակվեին մանուկ հասակից՝

իդեալներ ունենալով աչքերի առաջ: Ոչ վաղ անցյալում նույն երևույթին ականատես եղանք խորհրդային բռնատիրության կրթահամակարգի օրինակով... (Առանց ստերի, իրական իդեալ-կերպարներով դաստիարակության համակարգի կարիք այսօր մենք ունենք առավել քան երբևէ)...

Նկար 25. Արծվի արձանիկ Արտաշատից (Ք.ա. IV դդ.)

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Որքան էլ ակնհայտ է հռոմեացի պատմիչների միտումնավոր կեղծիքը, այդուհանդերձ, բոլոր աղբյուրներում նշվում է, որ հայոց զորքը սկզբում անհաջողություն է կրել: Սակայն ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները, Տիգրան Մեծը ոչ միայն պահպանել էր զինված ուժերը, այլև դրանցով ջախջախեց հռոմեացիներին, ապա օգնեց Միհրդատ VI-ին՝ ազատագրելու Պոնտոսը:

Որը՞ կարող էր լինել ճակատամարտը տանուլ տալու պատճառը: Տարածված այն բացատրությունը, թե հռոմեացիներին հաջողվել էր աննկատ հայոց զորքի թիկունքն անցկացնել մի զորագունդ, որի անակնկալ հարձակումն առաջ բերեց խուճապ, խիստ անհավանական է: Հենց հռոմեացի պատմիչներն են վկայում, որ Տիգրան Մեծը Լուկուլլոսի հետ բախումից առաջ ***քսանհինգ տարի պատերազմներ է մղել առանց պարտության*** ուստի տրամաբանական չէ մտածելը, թե քառորդդարյա փորձառությամբ զորավարը կարող էր այդպիսի պարզունակ սխալ թույլ տալ՝ առանց հսկողության թողնելով իր զորքի թիկունքը: Իսկ ի՞նչ բացատրություն կարող է ունենալ կատարվածը:

Կարելի է ենթադրել, որ հայկական բանակի ինչ-որ մի հնարք այնպիսի տպավորություն է ստեղծել հռոմեացիների մոտ, թե հայոց զորքը ոչնչացել է: Երբ փորձում ենք խորամուխ լինել, հասկանում ենք, որ Տիգրան Մեծը մարտադաշտում տեսնելով անբարենպաստ մարտական իրավիճակ, պետք է շատ արագ որոշում կայացներ: Եվ նա կարող էր որոշել «արագ երթով» բանակը դուրս բերել մարտադաշտից, որն էլ, թերևս, հռոմեացիների մոտ հայոց զորքի «վերացման» տպավորություն է ստեղծել: (Նման մարտավարական քայլ հայոց բանակն արեց Գավգամելայի ճակատամարտում, երբ հերոսաբար մարտնչելով, բայց տեսնելով Դարեհ III-ի փախուստը, «արագ երթով» հեռացավ մարտադաշտից):

Հռոմեացի պատմիչ Սալյուստիոսը (Ք.ա. I դար) պահպանել է Միհրդատ Եվպատորի նամակը՝ ուղղված Պարթևստանի արքա Հրահատ (Փրաատես) III-ին, որում Տիգրանակերտի ճակատամարտը ներկայացված է այսպես.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Փոքր տարածության պատճառով [հռոմեացիները] Տիգրանի մեծաթիվ ուժերին չթողեցին մարտի մեջ մտնել, և նրա չկշռադատված քայլն էլ ներկայացնում են որպես իրենց հաղթանակ:

ՍԱԼՅՈՒՍՏԻՈՍ,
հռոմեացի պատմիչ (Ք.ա. I դար)

Այսինքն՝ խոսքն այստեղ գնում է, ըստ էության, չկայացած ճակատամարտի մասին: «Փոքր տարածության պատճառով» հայոց զորքը, փաստորեն, չի մտել ճակատամարտի մեջ, այլ արագ հեռացվել է մարտադաշտից, ինչը Միհրդատ Եվպատորը համարում է «չկշռադատված քայլ»: Նույն նամակում Պոնտոսի արքան նաև նշում է, որ Տիգրանի տերությունը չի ենթարկվել լուրջ հարվածի...

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆԿՄԱՆ ԴԱՍԵՐԸ

Լուկուլլոսին սպասվում էր ևս մեկ հաջողություն, որը, սակայն, նրա համար վերջինն էր լինելու այդ պատերազմում: Տիգրանակերտում գտնվող օտարազգիները դավադրությամբ բացեցին քաղաքի դարպասները և անպարտելի մայրաքաղաքն ընկավ:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Լուկուլլոսը Տիգրանակերտը գրավեց այնտեղ բնակեցված օտարների ապստամբության հետևանքով: Քանզի նրանց մեծ մասը կիլիկեցիներ էին, որոնք մի ժամանակ տեղահանվել էին իրենց երկրից, և այժմ գիշերով հռոմեացիներին ներս թողեցին:

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ,
հռոմեացի պատմիչ (II – III դարեր)

Բայց Լուկուլլոսը, վերադառնալով Տիգրանակերտ, պաշարեց քաղաքն ավելի համարձակորեն: Իսկ քաղաքում գտնվող Միհրդատի զորավարները, որ բոլորովին հուսահատվել էին, իրենց փրկելու համար քաղաքը հանձնեցին Լուկուլլոսին:

ՄԵՄՆՈՆ,
պոնտացի պատմիչ (II դար)

Տիգրանակերտում հելլեններն ապստամբել էին բարբարոսների դեմ քաղաքը Լուկուլլոսին հանձնելու նպատակով. ուստիև սա հարձակվեց ու գրավեց այն:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ,
հռոմեացի պատմիչ (I – II դարեր)

Ինչպես տեսնում ենք, տարբեր աղբյուրներում որպես դավադիրներ նշվում են տարբեր ուժեր (կիլիկեցիներ, հույներ, պոնտացի զորավարներ), բայց բոլորում շեշտվում է, որ դրանք օտարներ էին:

Մայրաքաղաք Տիգրանակերտի անկման պատմությունը դաս է հետագա սերունդներիս համար, որ երբեք չի կարելի հայրենիքի պաշտպանությունը վստահել օտարին...

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՋԱԽՋԱԽՈՒՄՆ ՈՒ ՓԱԽՈՒՍՏԸ

Տիգրանակերտի առումը և թալանը որոշակի ոգևորություն առաջացրեց հռոմեացիների մոտ, ուստի Ք.ա. 68 թ. ամռանը Լուկուլլոսը որոշեց շարունակել առաջխաղացումը դեպի Արտաշատ: Արշավանքի նախնական ծրագիրը՝ մայրաքաղաքի անակնկալ գրավումով գերել թագուհուն և պարտադրել Տիգրան Մեծին՝ հանձնել Միհրդատ Եվպատորին, ձախողվել էր: Լուկուլլոսը Հայաստանում էր, սակայն նրա նահանջի ճանապարհները փակվել էին հայերի կողմից: Այստեղ ևս Լուկուլլոսն ուներ նույնպիսի ծրագիր, ինչ մեկ տարի առաջ՝ արքայի ընտանիքը գերելով՝ արշավանքն ավարտել:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Այնժամ նա շարժվեց դեպի Արտաշատ՝ Տիգրանի մայրաքաղաքը, որտեղ գտնվում էին թագավորի մանկահասակ երեխաները և նրա կանայք.

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ,
հռոմեացի պատմիչ (I – II դարեր)

Ուշագրավ է, որ Հայոց տիրակալը 72 տարեկանում ուներ «մանկահասակ երեխաներ»...

Նկար 26. Տիգրան II Մեծի դրամը, որի երկրորդ երեսին առկա են Մայր դիցուհի Անահիտի պատկերը և «Արքայից արքա Տիգրանի մակագրությունը

Տիգրան Մեծը հետևակի ղեկավարումը հանձնեց Միհրդատ Եվպատորին, իսկ ինքը ստանձնեց հեծելազորի հրամանատարությունը: Թշնամին զրկվեց մատակարարման ու համալրման հնարավորությունից՝ հանկարծակի հարձակումների ենթարկվելով հայոց այրուձիի կողմից: Հայերի հանկարծակի գրոհները հռոմեացիներին զրկում էին կողմնորոշվելու հնարավորությունից:

Հայկական Տավրոսի անցումից հետո Լուկուլլոսի բանակը հայտնվել էր Արածանիի հովտում, որտեղ էլ աշնանային գիշերահավասարի՝ սեպտեմբերի 22-ի շրջանում տեղի ունեցավ վճռորոշ ճակատամարտը:

Արածանիի ճակատամարտում հռոմեական բանակը խայտառակ պարտություն կրեց: Հռոմեացիներն, ինչպես և սպասելի էր, դա չեն ներկայացնում որպես պարտություն, այլ՝ իբր հռոմեացի զինվորները կարոտել էին հայրենիքը և որոշել վերադառնալ հայրենիք:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Ինչ վերաբերում է մեր զինվորներին՝ նրանց հաջողվել էր, իրոք, վերցնել մեկ քաղաք, որը գտնվում էր Տիգրանի թագավորության մեջ, և հաջողվել էր նույնպես հաղթություն տանել մի քանի ճակատամարտերում, սակայն այն կողմերի անչափ հեռավորությունը վատ էր ազդել նրանց վրա և հայրենիքի կարոտը սկսել էր նրանց հաղթահարել...

Թե ինչ պատահեց հետո՝ այդ մասին ես այլևս չեմ խոսի: Բանը վերջացավ նրանով, որ մեր զինվորները, առաջ շարժվելու փոխարեն, պահանջեցին ետ դառնալ արագորեն:

ՑԻՑԵՐՈՆ,
հռոմեացի պետական գործիչ և փիլիսոփա (Ք.ա. II-I դարեր)

Ի տարբերություն Ցիցերոնի՝ Պլուտարքոսը հռոմեացիների պարտությունն ու նահանջը փորձում է «կոծկել» նաև անբարենպաստ եղանակային պայմաններով...

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սակայն աշնանային գիշերահավասարի ժամանակ եղանակն անսպասելիորեն սաստիկ փչացավ: Գրեթե անընդհատ ձյուն էր տեղում, իսկ երբ երկինքը պարզվում էր, այնժամ եղյամ էր նստում և սառցակալում էր: Ձիերը հազիվ էին կարողանում խմել սառցակալած ջուրը. նրանք դժվարությամբ էին անցնում սառած գետը, քանի որ սառույցը ճզում էր և կտրում նրանց ջլերը:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ,
հռոմեացի պատմիչ (I – II դարեր)

Սա նույնքան ծիծաղելի է, որքան Տիգրանակերտի ճակատամարտում հռոմեացի 5 զոհի դիմաց հայերի տված 150 հազար զոհը... Ով ծանոթ է Հայաստանում, քաջ գիտի, որ աշնանային գիշերահավասարի՝ սեպտեմբերի 22-ի շրջանում եղանակը դեռևս ամառային է, իսկ «անընդհատ ձյուն և «սառած գետեր նոյեմբերին անգամ հազվադեպ են լինում...

Եղանակի հանկարծակի փոփոխության ու հայրենիքի կարոտի հեքիաթները Հռոմում հորինվել են, որպեսզի չսասանվի հավատը սեփական զորքերի նկատմամբ...

Նկար 27. Հեծյալների արձանիկներ Արտաշատից (I-II դդ.)

Իսկ իրականությունը, պատմված փոքրասիական ծագումով համեմատաբար չեզոք պատմիչի երկում, հետևյալն է.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Այս ընդհարման ժամանակ հռոմեացի հեծյալներին թշնամու հեծելազորը դժվար դրության մատնեց... Թշնամիները որևէ վնաս չկրեցին. այլ նրանք ետ դառնալով և հետապնդողներին նետահարելով, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին: Ու վերքերը ծանր էին և դժվար բուժելի. քանզի նրանք գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե մարմնի որևէ մասում մնալու և թե դուրս քաշվելու դեպքում, արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ:

Այնժամ Լուկուլլոսը, քանի որ շատերը վիրավորվում էին և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց այդտեղից...

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ,
հռոմեացի պատմիչ (II – III դարեր)

Լուկուլլոսի ղեկավարած հռոմեական բանակի խայտառակ պարտության գնահատականներից մեկն էլ այն եղավ, որ Հռոմի սենատը պաշտոնանկ արեց Լուկուլլոսին, երբ նա դեռ նահանջի ճանապարհին էր:

Ուշագրավ է, որ Լուկուլլոսի արշավանքը լուրջ ուշադրության չի արժանացել հայկական ավանդական պատմագրության մեջ: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերում Լուկուլլոսը համարվում է ընդամենը «***ինչ-որ մի ավազակ***», որը «***վրդովում էր Հայոց աշխարհը***»...

ՀԱԿԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՉԱԽՈՂՈՒՄԸ

Լուկուլլոսի արշավանքն ավարտվեց հռոմեական բանակի ջախջախմամբ և Հայաստանից վտարմամբ: Ք.ա. 67 թ. Հայոց զորքերի օգնությամբ Միհրդատ Եվպատորն ազատագրեց Պոնտոսը՝ դուրս մղելով այնտեղից հռոմեացիներին: Դրան հետևեց հայկական զորքերի կողմից Կապադովկիայի, իսկ Միհրդատ Եվպատորի կողմից (որի զորքի զգալի մասը տրամադրել էր Տիգրան Մեծը)՝ Բյութանիայի գրավումը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Միհրդատը խուսափում էր Լուկուլլոսին ճակատամարտ տալուց, սպասելով Տիգրանին, որը մեծ ուժերով գալիս էր միանալու նրան, և Լուկուլլոսը որոշեց շարժվել Տիգրանին ընդառաջ ու նրա հետ մարտի բռնվել, նախքան իր երկու թշնամիները դարձյալ կմիանային: Սակայն ճանապարհին զինվորները խռովություն բարձրացրին և լքեցին իրենց դիրքերը զորաշարքերում...

Լուկուլլոսը ստիպված եղավ հաշտվել այն մտքի հետ, որ Տիգրանը ամայացնում էր Կապադովկիան, որ Միհրդատը վերագտել էր իր հանդգնությունը, այն Միհրդատը, որի մասին սենատին զեկուցել էր, թե նրա հետ ամեն ինչ վերջացած է: Նրա այդ զեկույցից հետո Հռոմից ուղարկվել էին տասը պաշտոնատար անձինք Պոնտոսում գործերը կարգավորելու համար՝ այն համարելով վերջնականապես նվաճված երկիր. բայց երբ նրանք տեղ հասան, համոզվեցին, որ Լուկուլլոսն անգամ ինքն իր գլխի տերը չէ. զինվորներն իրենց ցանկությամբ բռնադատում են նրան:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ,
հռոմեացի պատմիչ (I – II դարեր)

Դատելով հայկական և պոնտական ուժերի արևմտյան ռազմերթից՝ Տիգրան Մեծն ու Միհրդատ Եվպատորը նախատեսում էին մեծ արշավանք սկսել Հռոմի դեմ Փոքր Ասիայի, (հնարավոր է նաև Միջերկրականի արևելյան) տարածքներում: Դժվար է ասել, թե ինչ ընթացք կունենար պատմությունը, եթե իրականանար նման մի արշավանք: Սակայն դա տեղի չունեցավ, ձախողվեց, ինչի պատճառը միջազգային իրադրության փոփոխությունն էր և հայոց արքայազն Տիգրան Կրտսերի բարձրացրած խռովությունը:

ՊՈՄՊԵՈՍՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Հայաստանում կրած պարտության համար Լուկուլլոսը պաշտոնանկ արվեց և նրա փոխարեն արևելք ուղարկվեց Պոմպեոս զորավարը: Նրան հաջողվեց ծովում հաղթանակ տանել կիլիկյան ծովահենների նկատմամբ, ինչը զգալիորեն ուժեղացրեց Հռոմի դիրքերը Միջերկրականի արևելքում:

Ք.ա. 67 թվի աշնանը Պոմպեոսն ափ իջավ Կիլիկիայում: Դիոն Կասսիոսի հաղորդման համաձայն՝ նա փորձեց բանակցել Միհրդատ Եվպատորի հետ, սակայն մերժում ստացավ, քանի որ վերջինս հույս ուներ ստանալու պարթևների արքա Հրահատ (Փրաատես) III-ի դաշնակցությունը: Պոնտացու ծրագիրը, սակայն, ձախողվեց:

Պոմպեոսին հաջողվեց իր կողմը գրավել Պարթևստանի արքա Հրահատ III-ին, որը ձգտում էր վրեժխնդիր լինել հայերից և հետ բերել իր երկրի տարածքային կորուստներն ու միջազգային դիրքը Առաջավոր Ասիայում: Փաստորեն, վերականգնվեց Ք.ա. 92 թ. կնքված դաշինքը, որի համաձայն՝ հռոմեա-պարթևական սահմանն անցնելու էր Եփրատով:

Պետք է ենթադրել, որ Ք.ա. 67 թ. աշնանը Պոմպեոսը միաժամանակ բանակցությունների մեջ է մտել նաև Տիգրան Մեծի հետ՝ մեղադրելով Լուկուլլոսին Հայաստանի դեմ դուրս գալու համար (ինչպես դա անում էր մեկ տարի անց՝ Արտաշատի բանակցություններում): Ցիցերոնի հաղորդման համաձայն՝ Պոմպեոսի հայտնվելը Կիլիկիայում «դանդաղեցրեց Տիգրանի շարժումը»:

Դատելով փաստերից՝ Տիգրան Մեծը շատ սթափ էր գնահատում ստեղծված միջազգային իրադրությունը և հակված էր խաղաղության հաստատմանը (ինչի համար էլ «դանդաղեցրեց շարժումը»): Միհրդատ Եվպատորը, ըստ էության, գոյություն չուներ առանց Տիգրան Մեծի, մինչդեռ Հայաստանի դեմ ստեղծված հռոմեա-պարթևական ռազմական խմբավորումը բավականին հզոր էր:

Սակայն հայոց տիրակալին սպասվում էր մեծ անակնկալ: Հայ ավագանու մի մասը, որ հակված էր շարունակելու պատերազմը, Տիգրան Կրտսերի գլխավորությամբ խռովություն բարձրացրեց...

Նկար 28. Պոմպեոս

ՏԻԳՐԱՆ ԿՐՏՍԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Պատմիչները նշում են, որ խռովարարների հետևում կանգնած էր Միհրդատ Եվպատորը, որին անհրաժեշտ էր պատերազմի շարունակությունը: Աղբյուրներում շեշտվում է նաև, որ Տիգրան Կրտսերը Միհրդատ Եվպատորի թոռն էր՝ ծնված Կլեոպատրայից:

Խռովությունը ճնշվեց, սակայն ապստամբ իշխաններն արքայազնի գլխավորությամբ հեռացան Հրահատ III-ի մոտ: Դա, հավանաբար, կատարվեց Միհրդատ Եվպատորի ցուցումով, որը հույս ուներ Տիգրան Մեծի փոխարեն իր թոռ Տիգրան Կրտսերին գահ բարձրացնելով՝ ստեղծել հայ-պարթև-պոնտական դաշինք ընդդեմ Հռոմի: Հրահատ III-ը, չնայած

Պոմպեոսին տրված իր խոստմանը, դեռևս ձեռնպահ էր մնում վճռական գործողություններից: Նա որոշեց երկակի խաղ սկսել՝ առավելագույնս օգտվելու բարենպաստ իրավիճակից: Նա արշավեց դեպի Արտաշատ՝ դրանով կատարելով հռոմեա-պարթևական դաշինքով ստանձնած պարտավորությունները, սակայն մինչ այդ Տիգրան Կրտսերին կնության տվեց իր դստերը՝ իր փեսային Մեծ Հայքի արքա դարձնելու հեռանկարով, ինչը կապահովեր հայերի պարթևամետ դիրքորոշումն ապագայում:

Ք.ա. 66 թվի սկզբին, ըստ պայմանավորվածության, հռոմեական զորքերը Պոմպեոսի գլխավորությամբ արշավեցին Պոնտոսի դեմ, իսկ պարթևական զորքերը՝ Հայաստան: Պոմպեոսը կարողացավ պարտության մատնել Միհրդատ Եվպատորին և փախուստի մատնել նրան իր երկրից: Միհրդատն այս անգամ ապաստան գտավ իր որդու մոտ՝ Բոսֆորի թագավորությունում՝ ներկայիս Ղրիմի տարածքում, և Ք.ա. 63թ. ինքնասպանությամբ վերջ դրեց իր կյանքին:

Մինչդեռ պարթևական զորքը, որն արշավել էր դեպի Արտաշատ, պարտություն կրեց և դուրս շպրտվեց Հայաստանից: Արկածախնդիր արքայազնը բռնեց փախուստի ճանապարհը դեպի Պոնտոս, սակայն ճանապարհին լուր ստացավ, որ Միհրդատ Եվպատորն ինքն է պարտություն կրել Պոմպեոսից և փտարվել Պոնտոսից: Տիգրան Կրտսերը որոշեց ապավինել Հրահատ III-ի ու Պոմպեոսի դաշինքին և գնաց վերջինիս մոտ: Պոմպեոսը, բնականաբար, որոշեց օգտագործել այս պատեհությունը Տիգրան Մեծի հետ սպասվելիք հարաբերություններում:

Նկար 29. Պարթև արքա Հրահատ III-ի դրամներից

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

... Տիգրանը՝ Տիգրանի որդին, վերցնելով իր հետ հզորներից ոմանց, որովհետև նրանց հաճելի չէր ծերունու իշխանությունը, փախավ Փրաատեսի մոտ. և մինչդեռ սա Պոմպեոսի հետ կնքված դաշինքի պատճառով մտածում էր իր անելիքի մասին, համոզեց նրան ներխուժել Հայաստան: Եվ նրանք եկան մինչև Արտաշատ... Երբ պարզվեց, որ (քաղաքի) պաշարման համար ժամանակ էր պետք, Փրաատեսը զորքերի մի մասը թողնելով (Տիգրանի) որդուն, վերադարձավ իր հայրենի երկիրը. այնժամ էլ հայրը դուրս եկավ արդեն մենակ մնացած որդու դեմ և հաղթեց. իսկ նա փախչելով, նախ ուղևորվեց դեպի Միհրդատը՝ իր մեծ հայրը. բայց երբ իմացավ, թե նա պարտվել է և ավելի շուտ ինքն է օգնության կարիք զգում, քան թե ի վիճակի է ուրիշին օգնելու, գնաց հռոմեացիների մոտ. և Պոմպեոսը նրան օգտագործելով իբրև առաջնորդի, արշավեց Հայաստան, նրա հոր դեմ:

* * *

Այնժամ Միհրդատը շտապեց դեպի Տիգրանը. բայց երբ նրա մոտ նախ բանագնացներ ուղարկեց, ոչ մի սիրալիրության չհանդիպեց, քանի որ (Տիգրանի) որդին՝ Տիգրանը, ապստամբել էր (հոր) դեմ, իսկ սա կասկածում էր, որ Միհրդատը, լինելով նրա պապը, հրահրել էր այդ վեճը իր դեմ: Ուստի և Տիգրան (արքան) ոչ միայն չընդունեց նրան, այլև նրա կողմից եկած բանագնացներին կալանավորեց ու բանտարկեց: Միհրդատը հուսախաբ լինելով՝ շուռ եկավ դեպի Կոլխիս...

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ
հռոմեացի պատմիչ (II – III դարեր)

Անտիկ պատմագրության պահպանած տեղեկությունները մեզ մղում են մտածելու, որ Տիգրան Մեծի ծրագրերի

ձախողման գործում բպցասական մեծ նշանակություն ունեցավ արքայազն Տիգրանի ապստամբությունը: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ այդ պատմագրության էջերը զերծ չեն հորինված ու շինծու պատմություններից, որոնց առիթ ունեցանք անդրադառնալու: Ուստի չի բացառվում, որ Տիգրան Կրտսերի պարագայում էլ լինեն հորինված կամ կեղծված տեղեկություններ: (Ն. Ադոնցն, օրինակ, հակված էր կարծելու, որ արքայազնը փորձում էր իրականացնել բազմաբայլ դիվանագիտական առաքելություն՝ խուսանավելով տարբեր ուժերի միջև՝ ոչ առանց հոր գիտության):

Այդպես մտածելու առիթ է տալիս մեզ փաստական մի անհամապատասխանություն: Ըստ հռոմեացի պատմիչների՝ Պոմպեոսն Արտաշատի պայմանագրի կնքման ժամանակ ձերբակալեց Տիգրան Կրտսերին և կալանավորած տարավ Հռոմ, որտեղ նա մասնակցեց Պոմպեոսի հաղթահանդեսին, իսկ Ք.ա. 58 թ. փախուստի փորձ կատարելիս սպանվեց: Այսինքն՝ Ք.ա. 66-58 թ. Տիգրան Կրտսերը պետք է լիներ հռոմեական գերության մեջ, մինչդեռ հրեա պատմիչ Հովսեպոս Փլավիոսը տեղեկացնում է, որ Ք.ա. 64 թ. Տիգրան Կրտսերն առաջնորդում էր պարթևական բանակը՝ Սիրիայի տարածքում պատերազմելով հռոմեացիների դեմ...

ԱՐՏԱՇԱՏԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՁԻՋՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ք.ա. 66 թ. առաջին կեսին երկու ռազմական ճամբարների միջև պատերազմները մղվեցին երկու ճակատով: Հռոմեա-պոնտական ճակատում հաղթեցին հռոմեացիները, իսկ պարթևա-հայկական ճակատում՝ հայերը:

Հրահատ III-ի ծրագրերը լիովին ձախողվեցին: Պոմպեոսի համար այս իրադրությունը դարձավ ճակատագրի պարգև. Հռոմի շահերից չէր բխում արևելքում Պարթևստանի հզորացումը՝ ի հաշիվ Հայաստանի թուլացման: Շատ ավելի

շահեկան էր Հռոմի համար ունենալ Մեծ Հայքն իբրև դաշնակից, մանավանդ, որ Տիգրան Մեծը խզել էր բոլոր կապերը Միհրդատ Եվպատորի հետ: Այս իրավիճակում սկսվեցին բանակցություններ, որոնք ավարտվեցին Ք.ա. 66 թվականին Արտաշատի պայմանագրի կնքմամբ:



Նկար 30. Ավերակ կամուրջ Տիգրանակերտի ճանապարհին (Արևմտյան Տիգրիս, Հասանքեյֆ հնավայր)

Երկու հաղթող երկրների՝ Հայաստանի և Հռոմի միջև Տիգրան Մեծի և Պոմպեոսի կողմից ստորագրվեց հաշտության պայմանագիր, որով Հայաստանը հօգուտ Հռոմի հրաժարվեց Եփրատից արևմուտք ընկած իր նվաճումներից, Պարթևստանին վերադարձրեց նախկին սահմանները: Մեծ Հայքը ճանաչվեց Հռոմի «դաշնակից և բարեկամ», ինչը ենթադրում էր ռազմական փոխօգնություն: Տիգրան Կրտսերը պետք է թագավորեր Ծոփքում և Կորդուքում, իսկ հոր մահից հետո՝ ամբողջ Մեծ Հայքում, ինչը չիրականացավ, քանի որ նա ձերբակալվեց և աքսորվեց Հռոմ:

Ինչո՞ւ Տիգրան Մեծը գնաց նման զիջումների:

Չէ՞ որ նա հաղթել էր հռոմեացիներին Ք.ա. 69-68 թթ. լուկուլլոսյան պատերազմում, Պոմպեոսի հետ դեռևս բախում չէր ունեցել, իսկ Պարթևստանի զորքերին հերթական ու վերջին ջարդը տվել էր հենց Ք.ա. 66 թվականին:

Առաջին հայացքից անհասկանալի թվացող այս լուծումը կարող է բացատրվել Տիգրան Մեծի հայրենապաշտությամբ: Նա իսկապես հաղթանակող էր, սակայն պարտվել և, փաստորեն, ասպարեզից դուրս էր մղվել Հայաստանի դաշնակից Պոնտոսը: Եվ Հայաստանը պատերազմը շարունակելու դեպքում կարող էր մնալ միայնակ ընդդեմ Հռոմի և Պարթևստանի, այն ժամանակների ընկալմամբ՝ «միայնակ՝ ընդդեմ ամբողջ աշխարհի»: Նա կարող էր շարունակել պատերազմը հանուն տիրակալի իր փառքի, բայց դրանով կվտանգեր իր հայրենիքի ապագան: ***Երբ կշեռքի նժարներին դրված էին տիրակալի իր փառքն ու հայրենիքի ապագան, Տիգրան Մեծն ընտրություն կատարեց հանուն հայրենիքի...***

Նա որոշեց հրաժարվել իր նվաճած տարածքներից՝ լիովին պահպանելով Մեծ Հայքի բագավորությունը և Հյուսիսային Միջագետքը:

Հռոմեացիները ցնծությամբ ընդունեցին Տիգրան Մեծի հաշտության պայմանները և սկսեցին սիրաշահել նրան: Չնայած հռոմեացի պատմիչների գոռոզամիտ արտահայտություններին, սա ակնհայտ է դառնում նաև այն փաստից, որ Հյուսիսային Միջագետքն ու Կորդվաց աշխարհը Հռոմի և Պարթևստանի նախնական համաձայնությամբ պետք է անցնեին պարթևներին, սակայն հռոմեացիները սկսեցին ամեն ինչ անել, որպեսզի այդ տարածքները մնան Տիգրան Մեծի տերության սահմաններում. և դրանք մնացին:

Արտաշատի պայմանագրով Տիգրան Մեծն ավարտեց իր պատերազմական կենսագրությունը և մինչև Ք.ա. 55 թվականն իշխեց խաղաղությամբ՝ արքայից արքա տիտղոսը փոխանցելով իր ժառանգներին:

ՑԻՑԵՐՈՆԸ՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՄԱՍԻՆ

Տիգրան Մեծի ժամանակակից միակ հռոմեացին, որի գրվածքները հասել են մեզ, ականավոր պետական գործիչ և

փիլիսոփա Մարկոս Տուլիոս Ցիցերոնն է: Ընթերցենք Տիգրան Մեծին բնութագրող հատվածներ նրա ճառերից.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

(Միհրդատ Եվպատորին), որ վախեցած էր ու փախստական, Տիգրանը՝ հայոց թագավորը, ընդունեց, հավատը նրա գործերին ամրապնդեց, բեկվածին բարձրացրեց, հուսալքվածին քաջալերեց:

«Գնեոս Պոմպեոսի գերագույն հրամանատարության մասին» ճառից (Ք. ա. 66 թ. հունվար)

Մենք ինքներս վերջերս վարել ենք Հայոց թագավոր Տիգրանի դեմ երկարատև և ծանր պատերազմ, քանզի նա անօրենություններ գործելով մեր դաշնակիցների հանդեպ, կարելի է ասել, պատերազմ է սանձազերծել մեր դեմ:

Եվ նա անձամբ ինքնին շատ զորեղ (vehemens) էր և մեր տերության ոխերիմ թշնամուն՝ Պոնտոսից վտարված Միհրդատին, պաշտպանեց իր զորքերով և իր թագավորության մեջ...

Այսպիսով նա (Տիգրանը), որը ինքը Հռոմի ժողովրդի թշնամին էր, որն ընդունել էր մեր չարագույն ոսոխին իր թագավորության մեջ, որը բախման մեջ էր մտել մեզ հետ, որը մարտի էր բռնվել, որը պայքարեց գրեթե տիրակալության համար, այժմ թագավորում է և օգտվում նրանց բարեկամի և դաշնակցի կոչումից, ում նա ինքն իր զենքով բռնացել էր:

«Ի պաշտպանություն Պուբլիոս Սեստիոսի» ճառից (Ք. ա. 56 թ. մարտ)

Հայոց տիրակալին տրված ցիցերոնյան բնորոշումը՝ «***vehemens***», Հռոմում քաղաքական գործիչներին բնութագրող բարձրագույն գնահատականն էր, որով հատկանշվում

էին տվյալ անձի հոգևոր արժանիքները, ֆիզիկական ուժը, նրա եռանդը և համակողմանի բացառիկությունը:



Նկար 31.
Մարկոս Տուլիոս Ցիցերոն

ՏԻԳՐԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հայոց պետականությունը Տիգրան Մեծից առաջ անցել էր զարգացման հազարամյակներ: Դեռևս Ք.ա. XXVIII-XXVII դարերում Հայաստանում հիշատակվում է վաղ թեոկրատական պետություն (Արատտա), իսկ Ք.ա. IX դարում ստեղծված Վանի տերությունը ոչ միայն միավորում է ողջ Հայկական լեռնաշխարհը, այլ դառնում է Առաջավոր Ասիայի հզորագույն տերությունը:

Տիգրան Մեծից առաջ Մեծ Հայքն ուներ պետական կառավարման մի համակարգ, որը հարատևեց նաև նրանից հետո՝ մինչև Արշակունյաց թագավորության անկումը (428 թ.):

Պետության գլուխ կանգնած էր արքան՝ բացարձակ միապետը, որը երկրի գերագույն սեփականատերն էր և զորքերի գլխավոր հրամանատարը: Արքային կից գործում էր երկրի բարձրագույն խորհրդակցական մարմինը՝ Աշխարհաժողովը, որում ընդգրկված էին բոլոր խավերի ներկայացուցիչները՝ բարձրաստիճան ազնվականներից մինչև «ռամիկ շինականք» և «դասապետք շինականաց»: Հոգևոր և դատական գերագույն իշխանությունը պատկանում էր գերագույն քրմին (քրմապետին), որը տնօրինում էր նաև կրթական գործը: Արքան երկիրը կառավարում էր արքունի գործակալությունների միջոցով, որոնք տնօրինում էին երկրի կյանքի տարբեր ոլորտներ (հազարապետություն, մարդպետություն, թագադիր ասպետություն, սպարապետություն, արքունի թիկնապահություն, սուրհանդակապետ, քաղաքների կառավարիչ, մատռվակապետ և այլն): Գործակալություններն ունեին իրենց սպասավորները:

Մեծ Հայքից դուրս կառավարումը Տիգրան Մեծն իրականացնում էր երկու եղանակով: Եթե նվաճվող երկրի արքան առանց լուրջ դիմադրության ընդունում էր իր գերիշխանությունը, շարունակում էր մնալ գահին՝ հարկեր և զինուժ տրամադրելու պարտավորությամբ: Մի շարք տեղերում արքան նշանակում էր կառավարիչներ (Ծոփքում՝ Մերուժանին, Ասորիքում՝ Բագադատեսին, Հյուսիսային Միջագետքում՝ իր եղբայր Գուրասին):

Նվաճված երկրներն ունեին տեղական ինքնավարություն, ինչի մասին են վկայում փյունիկյան քաղաքների, նախկինում պարթևներին ենթակա և Տիգրան Մեծից կախյալ թագավորությունների ստացած ազատություններն ու սեփական դրամ հատելու իրավունքը: Տերության կառավարման այդ համակարգը Տիգրան Մեծը ժառանգել էր Վանի և Աքեմենյան աշխարհակալություններից:

Տերության կառավարման մեջ կարևորագույն նշանակություն ունեին զինված ուժերը: Դատելով փաստերից՝ ռազմական բարեփոխումները եղել են նորահռչակ թագավորի առաջին ձեռնարկումներից:

Սենատին ուղղված Լուկուլլոսի զեկուցագրում ներկայացված է Տիգրան Մեծի բանակի կազմը և թվաքանակը՝ 300 հազար, ինչը վերաբերում է ողջ տերությանը: Բուն հայոց զորքի թիվը, դատելով «Զորանամակից և մատենագրական այլ աղբյուրներից, եղել է շուրջ 120 հազար:

Նկար 32.
Արծվի պատկերով ոսկյա մեդալիոն (Միսիան, Ք.ա. I դար)

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Հիրավի, նա ուներ քսան հազար պարսավորներ և աղեղնավոր, հիսունհինգ հազար այրուձի, որից տասնյոթ հազարը զրահավորված էին (թվական այս տվյալը բերվում է սենատին հղված Լուկուլլոսի զեկույցից), հարյուր հիսուն հազար ծանրազեն հետևազոր՝ տարբեր թվաքանակ ունեցող զորատեսակներում դասավորված: Այս ամենին գումարած երեսունհինգ հազար սակրավորներ, որոնք զբաղված էին ճանապարհներ անցկացնելով, կամուրջներ կառուցելով, գետերի մաքրմամբ, փայտահատությամբ և այլ կարգի աշխատանքներով, որոնց դասավորեցին զինվորների շարքերի հետևում՝ բանակին տալով ավելի ազդեցիկ տեսք և, միաժամանակ, ավելացնելով նրա հզորությունը:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ,
հռոմեացի պատմիչ (I – II դարեր)

Տիգրանյան բանակի գլխավոր հարվածային ուժը ծանրազեն հեծելազորն էր՝ փառապանծ հայոց այրուձին, որի փառքը հարատևեց դարեր շարունակ...

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Տիգրանյան ժամանակաշրջանում հայոց դիցարանի մասին որոշակի պատկերացում են տալիս գրավոր աղբյուրներից (հատկապես Մովսես Խորենացուց) ստացված հաղորդումները և Անտիոքոս Երվանդունու (Ք.ա. 70-34 թթ.) կառուցած Նեմրութի սրբավայրը:

Դիցարանի գլուխ կանգնած էր Հայր աստված Արամազդը, որին հաջորդում էին Մայր դիցուհին (Անահիտ), ապա քաջության աստված Վահագնը և Արեգ-Միհրը: Վերջինս

Նեմրութի սրբավայրում նույնացված է դպրության և իմաստության Տիր աստծո հետ:

Հայտնի երևույթ է, որ հելլենիզմի դարաշրջանում տեղական աստվածները նույնացվել են համապատասխան գործառույթներով հունական աստվածների հետ: Դա (կրոնական սինկրետիզմը) տեսնում ենք նաև Հայկազուն-Արտաշեսյանների դարաշրջանում (Արամազդ-Զևս (Դիոս), Անահիտ-Արտեմիս, Նանե-Աթենաս, Վահագն-Հերակլես, Աստղիկ-Աֆրոդիտե, Միհր-Հելիոս, Տիր-Ապոլոն և այլն): Սակայն օտար աստվածների ոչ անունները, ոչ էլ պաշտամունքի տարրերը չարմատավորվեցին հայ իրականության մեջ՝ մնալով միայն վերնախավային դրսևորում:

Տիգրան Մեծի օրոք ստեղծվել է բավականին լուրջ գրավոր ժառանգություն: Այն բաղկացած է եղել մեհենագիր հուշարձաններից, հունարենով արձանագրված կոթողներից ու տարբեր առարկաներից, դրամներից և գրակիր այլ իրերից: Դժբախտաբար, դրանց մեծագույն մասի վերաբերյալ մենք այսօր ունենք միայն մատենագրական տեղեկություններ:

Մատենագիրները վկայում են, որ Հայկազուն-Արտաշեսյանների օրոք Հայաստանում լայն տարածում էին ստացել հունական գիրն ու գրականությունը: Ուշագրավ է, որ Տիգրան Մեծի օրոք հույն փիլիսոփա և պատմագիր Մետրոդորոս Սկեփսիացու կողմից հայոց արքունիքում գրվել է Տիգրան Մեծի պատմությունը, որը մեզ չի հասել: Տիգրան Մեծի արքունիքում է ստեղծագործել նաև Ամֆիկրատես Աթենացին՝ հեղինակը «Մեծ մարդկանց մասին» աշխատության, որի մեկ գլուխը նվիրված է եղել Տիգրան Մեծին: Դժբախտաբար, այս երկը ևս մեզ չի հասել:

Բացառիկ հետաքրքիր են Տիրան Հայկազնի մասին տեղեկությունները, որոնք մեզանում քիչ են հայտնի: Տիգրանակերտի դավաղրական անկումից հետո նա իբրև ռազմագերի տարվեց Հռոմ: Իր տաղանդի և իմացության շնորհիվ, սակայն, նա ոչ միայն ճանաչվեց Հռոմում, այլև դարձավ Ցիցերոնի մտերիմը և ղեկավարեց նրա հիմնած բերականության ու ճարտասանության ակադեմիան Հռոմում:

Նկ. 33. Հայր աստված Արամազդի, Մայր դիցուհու, Վահագնի և Արեգ-Միհր-Տիրի արձանների գլուխները Նեմրութի սրբավայրում

Հայտնի է, որ մեծ թատրոններ են գործել Արտաշատում և Տիգրանակերտում, որոնցում ներկայացվել են նաև հույն թատերագիրների երկերը: Պլուտարքոսի հաղորդման համաձայն, Տիգրան Մեծի որդին՝ հայոց Արտավազդ արքան, հունարեն լեզվով գրել է ողբերգություններ, ճառեր ու պատմական երկեր, որոնցից մի քանիսը հայտնի են եղել նաև հռոմեացիներին Քրիստոսի ծննդյան II դարի սկզբին:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Տեղեկանալով, որ քաղաքում գտնվում էին մեծ թվով դերասաններ, որոնց Տիգրանը ամեն կողմից հրավիրել էր իր կառուցած թատրոնի հանդիսավոր բացմանը, Լուկուլլոսը օգտագործեց նրանց ի պատիվ իր հաղթանակի կազմակերպված խաղերում ու հանդիսություններում:

* * *

... Նրանք համաձայնվել էին, որ Արտավազդի քույրը ամուսնանա Օրոդեսի որդու՝ Բակուրի հետ, նրանք փոխադարձաբար իրար մոտ խնջույքներ ու կերուխում էին կազմակերպում, հաճախ հունական ներկայացումներ էին տրվում, քանի որ Օրոդեսին օտար չէին հունարեն լեզուն ու գրականությունը, իսկ Արտավազդը նույնիսկ ողբերգություններ էր հորինում, գրում էր ճառեր ու պատմական երկեր, որոնց մի մասը պահպանվել է:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ,
հռոմեացի պատմիչ (I – II դարեր)

Մշակույթի մասին խոսելիս՝ հարկավոր է նշել ճարտարապետության և քանդակագործության խիստ բարձր մակարդակը, որի մասին կան և՛ մատենագրական, և՛ հնագիտական վկայություններ:

Մեզ են հասել երկու ժայռափոր բարձրաքանդակներ Տիգրանակերտի շրջանում և Հյուսիսային Միջագետքում

(Բոշատ և Բավիան հնավայրեր), որոնցում, ամենայն հավանականությամբ, պատկերված է Տիգրան Մեծը:

Յուրօրինակ արվեստի գործեր կարելի է համարել Տիգրան Մեծի դրամները, որոնց առաջին երեսին տիրակալի բարձրարվեստ պատկերն է:

Մեծ քանակությամբ կենցաղային մշակույթի նմուշներ են հայտնաբերվել Տիգրանյան դարաշրջանի հնագիտական հուշարձաններից (Արտաշատ, Գառնի, Սիսիան, Արցախի Տիգրանակերտ և այլն): Դա այն դեպքում, երբ Արևմտյան Հայաստանի քննարկվող ժամանակաշրջանի հուշարձանները գրեթե ուսումնասիրված չեն:

Ապագայում, անշուշտ, մեզ սպասում են ավելի մեծ նորություններ ու բացահայտումներ...

Նկար 34. Կնոջ (հավանաբար՝ Աստղիկ դիցուհու) արձան Արտաշատից (Ք.ա. II-I դդ.)

«ԶՈՒԳԱԿՇԻՌՔ»

Հին աշխարհում ընդունված էր համեմատել մեծերին՝ նրանց արժանիքներն ավելի տեսանելի ու գնահատելի դարձնելու նպատակով: Նման համեմատական կենսագրությունները Ոսկեդարում թարգմանեցին «Զուգակշիռք»...

Բազմաթիվ ուսումնասիրողներ համեմատականներ են անցկացրել Տիգրան Մեծի և նրա ժամանակակից Միհրդատ Եվպատորի կերպարների միջև: Դրանցից հատկապես հիշատակության է արժանի ֆրանսիացի գիտնական Ռընե Գրուսեի դիպուկ գնահատականը.

...Հին Հայաստանը կհասնի իր ընդարձակման գագաթնակետին, և դա կլինի Տիգրան թագավորի օրոք:

Սա մի չճանաչված մեծ իշխող է, որ, անկասկած, շատ ավելի մեծ արժանիքներ ունի, քան նրա ժամանակակից Միհրդատը, որով հիացել է պատմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով «ինքնասպանության մղեց իր պետությունը», մինչդեռ Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար:

Ռընե Գրուսե

Փորձենք համեմատություն անցկացնել տարբեր ժամանակներում ապրած երկու տիրակալների միջև. Տիգրան Մեծ և Նապոլեոն Բոնապարտ: Երկուսն էլ ստեղծեցին աշխարհակալություններ, և երկուսի ստեղծած տերությունները էլ փլուզվեցին իրենց աչքերի առաջ, քանի որ դեպքերի բերումով երկուսն էլ միայնակ մնացին ընդդեմ ամբողջ աշխարհի (իրենց ժամանակների ընկալումով):

Երբ Նապոլեոն Բոնապարտը հայտնվեց միջազգային մեկուսացման մեջ, նախընտրեց գործել հանուն տիրակալի իր փառքի: Դրանով դա անկման հասցրեց իր տերությունը, իր երկիրը դարձրեց բազմաթիվ երկրների բանակների ոտքի կոխան, որից հետո կատարեց նոր արկածախնդրություն՝ «100 օրը», ինչը դարձավ իր երկրին ոչինչ չտված բազմահազար ֆրանսիացիների արյունահեղության պատճառ...

Երբ Տիգրան Մեծը մնաց մենակ Հռոմի և Պարթևստանի (ժամանակի ընկալումով՝ ամբողջ աշխարհի) դեմ, դեռևս անպարտելի էր և կարող էր շարունակել պատերազմը հանուն տիրակալի իր փառքի: Սակայն դրանով նա կարող էր վտանգել իր երկրի ապագան: Ուստի որոշեց ստորադասել տիրակալի իր փառքն ու ընտրություն կատարեց հանուն հայրենիքի: Նա հրաժարվեց իր նվաճումներից՝ լիովին պահպանելով հայրենի թագավորությունը և «արքայից արքա» տիտղոսը ժառանգություն թողեց սերունդներին...

ԲԱՐԵՊԱՇՏ ՏԻՐԱԿԱԼԸ (ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

Այսքանով ավարտենք անդրադարձը Տիգրանյան դարաշրջանի իրադարձություններին: Մենք այն կատարեցինք, որպեսզի հասկանանք, թե մեր ժողովրդի հիշողության մեջ ինչո՞ւ է հատկապես տպավորված Տիգրան Մեծի կերպարը:

Եվ մեզ համար ուրվագծվեցին մի շարք պատասխաններ:

Տիգրան Մեծի կերպարն է ուղեկցում մեզ դարեր շարունակ, քանզի նա տիրակալ էր, որ բարբարոս չդարձավ: Նա մեծ նվաճող էր և նվաճումներում անգամ՝ ազատարար: Հզոր էր, քաջ ու խոհեմ, ծրագրում և իրագործում էր տասնամյակների հեռավորությամբ: Նրա հանդեպ սիրո ու հարգանքի պատճառով երկրի բնակիչները մրցում էին երկրի շենացման համար: Նա բարեպաշտ էր ու հայրենանվեր՝ պատրաստ զոհաբերելու տիրակալի իր փառքը հանուն հայրենիքի...

Տիգրան Մեծի կերպարն իր հետքը թողեց նաև օտարների հիշողության մեջ: Նրա մասին գրել են տասնյակ օտարազգի պատմիչներ և նոր ժամանակների բազմաթիվ ուսումնասիրողներ: Նրա կերպարին նվիրվել են բազում գեղարվեստական գործեր, որոնց մեջ՝ ավելի քան երկու տասնյակ օպերաներ:

Հռոմի ամենաականավոր դեմքերից մեկը՝ Ցիցերոնը, սենատում արտասանած իր ճառերում Տիգրան Մեծին բնորոշում է՝ «***vehemens***» կոչելով, որը Հռոմում քաղաքական գործչին տրվող բարձրագույն գնահատականն էր: Նրանից քիչ ուշ ապրած նույնպես հռոմեացի մատենագիր Վելլեոս Պատերկուլոսը Տիգրան Մեծին համարում է «***իր ժամանակի հզորագույն թագավորը***» և «***թագավորներից մեծագույնը***»... Մեկ այլ պատմիչ՝ Եվտրոպիոսը գրում է, որ Տիգրան Մեծը «***տիրակալում էր մեծ փառքով***», իսկ Պոմպեոս Տրոգոսը տեղեկացնում է, որ նրան մեծարում էին՝ կոչելով «***Աստված***»...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ցանկն ամենևին չի հավակնում Տիգրան Մեծի մասին գիտական գրականության լիակատար տեղեկատու լինելու: Ներկայացված են Տիգրան Մեծի մասին հիմնական ուսումնասիրություններն ու աղբյուրները (հրատարակված հայերեն): Ավելի մանրամասն կարելի է տեսնել այս ցանկում նշված աշխատանքներում հղված գրականությունը:

Ադոնց Ն., Տիգրան Մեծ. Ուսումնասիրություններ, Եր., 2010:

Առաքելյան Բ., Հին Արտաշատ, Եր., 1975:

Աստուրեան Հ.Յ., Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն.Ք. մինչև 428 յ.Ք, Վենետիկ, 1912:

Ջարյան Ա., Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Եր., 1966:

Էլչիբեկյան Ժ., Հայաստանը և Սելևկյանները, Եր., 1979:

Էքիարդ Կ., Տիգրան Բ եւ Հայ-լուկուլլեան պատերազմները (աշխատասիրեց Հ. Գարեգին Գարանֆիլեան), Վիեննա, 1926:

Լեո, Երկերի ժողովածու, հատ. I, Եր., 1966:

Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970:

Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI – մ.թ. IV դդ.), Եր., 2005:

Հակոբյան Հ.Պ., Տիգրան Մեծ, Եր., 2005:

Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատ.I, Եր., 2007:

Հայ ժողովրդի պատմություն, հատ. I, (ԳԱ հրատ.), Եր., 1971:

Հարությունյան Բ.Հ., Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրության հարցի շուրջ, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», 1994, ԺԴ:

Հրանդ Ք. Արմէն, Մեծն Տիգրան, Գահիրե, 1957:

Մանանդյան Հ., Տիգրան Երկրորդը և Հռոմը, Եր., 1940 (վերահրատարակությունը՝ Եր., 1972; Երկեր, հ. Ա, Եր., 1977; ռուսերեն թարգմանությունը՝ Եր., 1943; ֆրանսերենը՝ Լիսաբոն, 1963):

Մանասերյան Ռ.Լ., Սպարտակի մոտ ժամանած հեծելազորի հարցի շուրջ (Վարկած՝ Սպարտակի հետ Տիգրան Մեծի ռազ-

մական կապերի վերաբերյալ), «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 2004, 3:
Մանասերյան Ռ.Լ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Եր., 1987 (երկրորդ հրատ.՝ Եր., 2007):
Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981:
Մուշեղյան Խ., Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դար - մ.թ. XIVդար), Եր., 1983:
Չամչյան Մ., Հայոց պատմություն, հատ. Ա, Վենետիկ, 1784 (Եր., 1985):
Պլուտարքոս, Կենսագրություններ, Եր., 2001:
Պտուկեան Զ., Արտաշէսեան հարստութեան դրամները, Վիեննա, 1983:
Սարգսյան Գ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966:
Սարգսյան Գ., Տիգրան Բ-ի տերությունը, ՊԲՀ, 1966, 1:
Ստրաբոն, Եր., 1940:
«Տիգրան Մեծ. Գահակալության 2100 ամյակ» միջազգային գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, Աշտարակ, 2005:
Моммзен Т., История Рима, т. II-III, М., 2005.
Саркисян Г.Х., Тигранакерт, М.,1960.
Саркисян Г.Х., Свидетельство поздневавилонской хроники об Армении времени Тиграна, ПБХ, 1991, 2.
Тирацян Г., Портретное искусство Армении по монетам Тиграна II и Артавазда II, ПБХ, 1973, 4.
Тирацян Г., Культура древней Армении V в до н.э - III в. н.э., Ер., 1988.
Debevoise N.C., A Political History of Parthia, New York, 1968.
Gurzadyan V. and Vardanian R., Halley's comet of 87 BCE on the coins of Armenian king Tigranes?, "Astronomy & Geophysics", vol. 45, London, 2004.
Hümann K. und Puschtein O., Reisen in Kleinasien und Nordsyrien, Berlin, 1890.
Lehmann-Haupt C.F., Armenien einst und jetzt, Bd. 1, Berlin, 1910.
Markwart J., Südarmenien und die Tigrisquellen nach den grieschen und arabischen Geographen, Wien, 1930.
Mommsen Th., Die Lage von Tigranokerta, "Hermes", 1887, IX.
Nercessian Y.T., Armenian Numismatic Studies, Los Angeles, 2000.
Reinach Th., Mithridate Eupator roi de Pont, Paris, 1890.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԻԳՐԱՆ II ՄԵԾԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ 5
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԻԳՐԱՆ II-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ 9
ԱՐՔԱՅԱՋՆ ՏԻԳՐԱՆԸ 10
ՊԱՏԱՆԴ-ԱՐՔԱՅԱՋՆԻ ՎԵՐԱԴԱՐՁՆ ՈՒ ԹԱԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 12
ԾՈՓՔԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՄԵԾ ՀԱՅՔԻՆ ԵՎ ՀԱՅ-ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ 13
ԿԱՊԱԴՈՎԿԻԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ 15
ՀՌՈՄ-ՊԱՐԹԵՎՍՏԱՆ ԴԱՇԻՆՔՆ ԸՆԴԴԵՄ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՈՒ ՊՈՆՏՈՍԻ 16
ԿԱՊԱԴՈՎԿԻԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ 19
ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՄԵԾ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԵԿՆԱՐԿԸ. ԳԻՍԱՍՏՂԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ 21
ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ 22
ԿՈՄՄԱԳԵՆԵ-ԿԱՄԱԽԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 26
ՏԻԳՐԱՆՅԱՆ ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԻ ԾԱԳՈՒՄԸ 28
ՏԻԳՐԱՆ ՄԵԾԸ՝ ՍԵԼԵՎԿՅԱՆ ԳԱՀԻՆ 29
ԿԻԼԻԿԻԱՆ՝ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՋՄՈՒՄ 32
ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 34
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵԳԻՊՏՈՍԻՆ 35
ՆԱԲԱԹԵԱՆ՝ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՋՄՈՒՄ 36
ՀՌՈՄԻ ԽԱՐԴԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀՐԵԱՍՏԱՆԻ ԱՆՁՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 37
ՏԻԳՐԱՆՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ 39
ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԱՆՎԱՄԲ ՆՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ 42
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՐՏԱԿԻՆ 45
ԼՈՒԿՈՒԼԼՈՍԸ՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՄԱՍԻՆ 47
ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ 49
ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ 50
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԸ 51

ՀՌՈՄԵԱՅԻ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ 53
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ 55
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆԿՄԱՆ ԴԱՄԵՐԸ 57
ՀՌՈՄԵԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՋԱԽՋԱԽՈՒՄՆ ՈՒ ՓԱԽՈՒՄՏԸ 58
ՀԱԿԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՉԱԽՈՂՈՒՄԸ 63
ՊՈՄՊԵՈՍՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 64
ՏԻԳՐԱՆ ԿՐՏՄԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 65
ԱՐՏԱՇԱՏԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ: ՏԻԳՐԱՆՅԱՆ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ 68
ՑԻՑԵՐՈՆԸ՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՄԱՍԻՆ 70
ՏԻԳՐԱՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 72
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ 74
«ԶՈՒԳԱԿՇԻՌՔ» 78
ԲԱՐԵՊԱՇՏ ՏԻՐԱԿԱԼԸ (ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ) 80
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 81

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՑ ՄԵԾԱԳՈՒՅՆԸ

Սրբագրիչ՝ Երանուհի Դանիելյան
Քարտեզագիր՝ Գրիգոր Բեգլարյան

ԵՐԵՎԱՆ - 2010
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան, Ալեք Մանուկյան, 1